

7  
ՄԱՐՏԻ  
2022

Luys Lnyju®



«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ  
ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ.  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# «ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	2
<b>1. ՕՐԵՆՔՈՎ ՀԵՏԱՊՆԴՎՈՂ ՆՊԱՏԱԿԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....</b>	<b>2</b>
<b>2. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ.....</b>	<b>5</b>
2.1. Սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության վերլուծություն.....	5
2.2. Սեփականության հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունը.....	7
2.2.1. Օրենքով գույքի օրինականության ստուգման համար նախատեսված հիմքերը.....	9
2.2.1.1. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը.....	10
2.2.1.2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը.....	12
2.2.1.3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքը.....	13
2.2.1.4. 2021թ. դեկտեմբերի 14-ին հրապարակված նախագծով առաջարկվող նոր հիմքը.....	15
2.2.2. Օրենքով նախատեսված գործընթացները գործի դնելու համար հիմք հանդիսացող հանցատեսակների չափազանց լայն շրջանակը.....	16
2.3. Օրենքի համաչափությունը.....	17
2.3.1. Կապը հանցագործության և բռնազանձվող գույքի միջև.....	18
2.3.2. Ուսումնասիրության լայն ժամանակահատվածը.....	22
<b>3. ՕՐԵՆՔԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԻ ԽՆԴԻՐԸ.....</b>	<b>23</b>
<b>4. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԻ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ.....</b>	<b>24</b>
4.1. Ապացուցման բեռի բաշխման համաչափության հիմնախնդիրները.....	25
4.2. Մրցակցային դատավարության հիմնախնդիրները.....	27
4.3. Գործի նյութերին ծանոթանալու համար սեղմ ժամկետները.....	28
<b>5. ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ.....</b>	<b>29</b>
<b>6. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ.....</b>	<b>31</b>
<b>7. ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ.....</b>	<b>36</b>

7.1.	«Գույք» հասկացության սահմանումը.....	37
7.2.	«Օրինական եկամուտ» հասկացությունը .....	38
7.3.	Օրինական եկամտի և ծախսի հաշվարկի մեթոդաբանությունը.....	39
7.4.	Ուսումնասիրության ժամանակահատվածը մինչև 1991թ. տարածելը .....	39
7.5.	Երրորդ անձի շահերի պաշտպանության մեխանիզմի բացակայությունը.....	40
7.6.	Բռնագանձման վարույթ հարուցելու հիմքերի անհստակությունը.....	40
7.7.	Կիրառման ենթակա Օրենքի տեղը նորմերի աստիճանակարգության մեջ.....	41
7.8.	Բռնագանձման ենթակա գույքի անորոշությունը.....	41
<b>8.</b>	<b>ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՕՐԵՆՔՈՎ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ.....</b>	<b>41</b>
<b>9.</b>	<b>ԱՄՓՈՓՈՒՄ.....</b>	<b>44</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում ձեռնարկված առանցքային միջոցառումներից էր «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի ընդունումը (այսուհետ նաև՝ Օրենք)<sup>1</sup>:

Օրենքով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ է ներմուծվել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգ: Նշված կառուցակարգի համաձայն՝ որոշակի ազդակների դեպքում դատախազությունը սկսում է անձի (նրա հետ փոխկապակցված անձանց) գույքի օրինականության ուսումնասիրություն և այն դեպքում, երբ անձին (նրա հետ փոխկապակցված անձանց) պատկանող գույքի արժեքը գերազանցում է նրանց օրինական եկամուտները, դիմում է դատարան՝ քաղաքացիական դատավարության կարգով այդ գույքը բռնագանձելու համար: Դատավարության ընթացքում, եթե անձը կամ անձինք չեն կարողանում ապացուցել, որ գույքի ծագումը հաստատվում է օրինական եկամուտներով, ապա, այն բռնագանձվում է հոգուտ Հայաստանի Հանրապետության:

«Լույս» հիմնադրամի կողմից դեռևս 2019թ. հոկտեմբերի 14-ին հրապարակվել են Օրենքի նախագծի սկզբնական տարբերակի խնդրահարույց դրույթների վերաբերյալ դիտարկումներ<sup>2</sup>: Հաշվի առնելով Օրենքի նախագծում տեղի ունեցած փոփոխությունները՝ 2020թ. մարտի 3-ին հրապարակվել է դիտարկումների լրամշակված տարբերակը<sup>3</sup>:

Ամբողջացնելով նախորդ հրապարակումները՝ սույն վերլուծության մեջ անդրադարձ է կատարվում Օրենքի սահմանադրականությանը վերաբերող հարցերին: Վերլուծությունը կարող է օգտակար լինել ոլորտի մասնագետներին, փաստաբաններին և իրավաբանական հանրության համար՝ Օրենքի խնդրահարույց ասպեկտների մասին իրենց ուսումնասիրություններում և գործնական աշխատանքում:

<sup>1</sup> Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 16.04.2020թ., ՀՀՊՏ 2020.05.13/50(1605), հոդ. 580, ՀՕ-240-Ն:

<sup>2</sup> Հրապարակման մեջ ներկայացվում է նաև միջազգային փորձի վերլուծությունը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մոտեցումը, առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման Նախագծով առաջրկվող կարգավորումների համեմատական վերլուծությունը Վրաստանի և Բուլղարիայի կարգավորումների հետ (հասանելի է «Լույս» հիմնադրամի կայքում կամ <https://tinyurl.com/yc86yfk8> հղումով):

<sup>3</sup> Հասանելի է «Լույս» հիմնադրամի կայքում կամ <https://tinyurl.com/y7n9tpho> հղումով:

Վերլուծության մեջ Օրենքի սահմանադրականության հիմնախնդիրները քննարկման առարկա են դարձվում հետևյալ տեսանկյուններից՝

- 1) Օրենքով հետապնդվող նպատակի լեգիտիմություն (մաս 1),
- 2) սեփականության հիմնական իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափություն (մաս 2),
- 3) Օրենքի հետադարձ ուժ (մաս 3),
- 4) արդար դատաքննության իրավունքի խախտումներ (մաս 4),
- 5) Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի խախտում (մաս 5),
- 6) մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության հիմնական իրավունքներին միջամտության իրավաչափություն (մաս 6),
- 7) իրավական պետությունից բխող և հիմնական իրավունքները սահմանափակելիս օրենքներին ներկայացվող որոշակիության սահմանադրական պահանջների խախտումներ (մաս 7),
- 8) դատախազության սահմանադրական լիազորությունների հետ կապված խնդիրներ (մաս 8):

## 1. ՕՐԵՆՔՈՎ ՀԵՏԱՊՆԴՎՈՂ ՆՊԱՏԱԿԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգը համեմատաբար նոր երևույթ է միջազգային պրակտիկայում, հատկապես՝ մայրցամաքային իրավական համակարգ ունեցող երկրներում, ինչպիսին է նաև Հայաստանի Հանրապետությունը: Նման գործիքակազմի նպատակն է կանխարգելել հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործությունների միջոցով զգալի չափերի հասնող եկամտի ստացումը<sup>4</sup>: Խնդիրն այն է, որ մեղադրական դատավճռի վրա հիմնված բռնագանձումը ոչ բոլոր դեպքերում է հնարավոր դարձնում հանցագործության արդյունքում ստացված գույքի բավարար չափով բռնագանձումը: Ըստ այդմ, չնայած երկրից երկիր կարգավորումների տարբերությանը, նպատակի տեսանկյունից մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգը միջազգային պրակտիկայում մշակվել և կիրառվում է առանձնակի կատեգորիայի հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի շրջանակներում, երբ.

- ենթադրյալ քրեական հանցագործության համար դատապարտումը կարող է օբյեկտիվորեն հնարավոր չլինել, մասնավորապես՝ մեղադրյալի

<sup>4</sup> Անգլերեն՝ "crime does not pay," <https://db.eurocrim.org/db/en/doc/3205.pdf>, կետ 2, background:

անձեռնմխելիության, մահվան, փախուստի կամ հիվանդության պատճառներով,

- կարող է շատ դժվար լինել գույքի և հանցագործության միջև պատճառահետևանքային կապի հաստատումը, քանի որ որոշ հանցատեսակներ (ինչպիսիք են՝ թրաֆիքինգը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը), ուղեկցվում են ֆինանսական հոսքերի և միջնորդ կազմակերպությունների առկայությամբ, որոնց նպատակը հանցագործի և հանցագործության արդյունքում ստացված շահույթի միջև կապը թաքցնելն է<sup>5</sup>, ապա դժվարին է դառնում հանցագործության արդյունքում ստացված շահույթի բռնագանձման գործընթացը<sup>6</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել, սակայն, որ միջազգային փաստաթղթերում և միջազգային պրակտիկայում հանդես է գալիս որպես վերը նշված հանցագործությունների դեմ պայքարի **բացառիկ միջոց**<sup>7</sup> և նախատեսվում է այն դեպքերի համար, երբ օբյեկտիվորեն հնարավոր չէ բռնագանձումը իրականացնել քրեական դատավարության միջոցով:

Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոռուպցիայի դեմ կոնվենցիա)<sup>8</sup> 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց մեղադրական դատավճռի բռնագանձման կառուցակարգ անհրաժեշտ է նախատեսել այն ժամանակ, «երբ *հանցագործը չի կարող հետապնդվել մահվան, թաքնվելու կամ բացակայելու պատճառով կամ այլ համապատասխան դեպքերում*»:

Կարևոր է նաև նկատի ունենալ, որ և՛ Կոռուպցիայի դեմ կոնվենցիան<sup>9</sup>, և՛ Եվրոպայի խորհրդի Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիան<sup>10</sup> (Վարչակազմի կոնվենցիա)<sup>11</sup>, անդամ պետություններին կոչ են անում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգ նախատեսել այնքանով, որքանով դա

<sup>6</sup> <https://db.eurocrim.org/db/en/doc/3205.pdf>, կետ 2:

<sup>7</sup> CASE OF G.I.E.M. S.R.L. AND OTHERS v. ITALY, կետ 141:

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 23.10.2006թ.:

<sup>9</sup> 31-րդ հոդված, 8-րդ մաս:

<sup>10</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75327>

<sup>11</sup> 3-րդ հոդված, 4-րդ մաս:

համապատասխանում է իրենց ներքին օրենսդրությամբ սահմանված հիմնարար սկզբունքներին:

Միջազգային փորձի լույսի ներքո դիտարկելով Օրենքով նախատեսվող կարգավորումները՝ առաջին հերթին աչքի է զարնում Օրենքով հետապնդվող նպատակի անհստակությունը: Օրենքը չի պատասխանում այն հարցին, թե նման կառուցակարգի միջոցով ո՞ր գույքն է նախատեսվում բռնագանձել: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «ապօրինի ծագում ունեցող գույք» հասկացությունը սահմանում է որպես օրինական եկամուտներով չհիմնավորվող գույք: Այսինքն՝ Օրենքը ելնում է այն կանխավարկածից, որ գույքն ապօրինի է միմիայն այն բանի ուժով, որ առկա չեն դրա օրինական ծագումը հիմնավորող ապացույցներ, և «գույքի ապօրինի ծագումը» որևէ կերպ չի պայմանավորվում քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարման կամ վարչական իրավախախտման հետ: Արդյունքում ստացվում է, որ գույքը կարող է դառնալ «ապօրինի» ծագում ունեցող նաև այն պարագայում, երբ այն ձեռք է բերվել, օրինակ, քաղաքացիաիրավական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում (օրինակ՝ փոխառության արդյունքում ստացված և այնուհետև չվերադարձված գումար):

Օրենքով հետապնդվող նպատակի անհստակությունն ավելի է ընդգծվում, երբ համադրում ենք Օրենքի դրույթները և Ազգային ժողով ներկայացված Օրենքի նախագծին կից հիմնավորումը (այսուհետ նաև՝ Հիմնավորման): Հիմնավորման 4-րդ կետի համաձայն՝ *առանց մեղադրական դատավճռի* ակտիվների բռնագանձումը (non-conviction based asset forfeiture) կարևորագույն գործիք է կոռուպցիոն և այլ բնույթի հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտները բռնագանձելու համար: Այն, որ գույքի բռնագանձման գործընթացը ուղղակիորեն շաղկապված է «հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու և այդ համատեքստում հանցավոր գործունեության արդյունքում ապօրինի ձեռք բերված գույքը բռնագանձելու անհրաժեշտությամբ», հստակորեն երևում է նաև Հանրապետության նախագահի կողմից Օրենքի ստորագրման հետ միաժամանակ արված հայտարարության մեջ<sup>12</sup>: Մինչդեռ Օրենքով նախատեսված չէ որևէ հստակ կարգավորում, որը «ապօրինի ծագում ունեցող գույքը» պատճառահետևանքային առումով (ուղղակի կամ անուղղակի) կապի հանցագործության հետ, ընդհակառակը՝ Օրենքով նախատեսված որոշ դրույթների արդյունքում այդ կապը բացարձակապես խզվում է:

Միջազգային փորձի վերը նշված վկայակոչումից պարզ է նաև, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգի

<sup>12</sup> <https://www.president.am/hy/signed-laws/item/2020/05/11/President-Armen-Sarkissian-signed-laws/>:

անհրաժեշտությունը առաջացել է հանցագործությունների արդյունքում կուտակված ահռելի շահույթը քրեական դատավարության կարգով բռնագանձելիս առաջացող դժվարությունների պատճառով: Որպես նման դժվարությունների օրինակ՝ կարելի է ներկայացնել Հիմնավորման 16-րդ կետում տեղ գտած ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի հաշվետվությունից հատվածը, որտեղ արձանագրվել է, որ չնայած Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման հարուցված գործերի քանակը աճել է (53 գործ 2010-2014 թթ. ընկած ժամանակահատվածում), դրանց մոտ կեսը (26 գործ) կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (*մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ*): Այս առումով, Օրենքի նախագծի Հիմնավորումը չի պարունակում փաստարկ այն մասին, թե ինչով է պայմանավորված առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթը քրեական գործի քննությանը զուգահեռ իրականացնելու՝ Օրենքով նախատեսված կառուցակարգը, և ինչու նշված գործընթացը չի կարող իրականացվել հենց քրեական վարույթի շրջանակներում՝ քրեադատավարական երաշխիքների պահպանմամբ:

Օրենքի կարգավորումներով հետապնդվող նպատակի որոշակիացումը հիմնարար նշանակություն ունի դրանով նախատեսված կառուցակարգերի իրավաչափության, Օրենքով հետապնդվող նպատակի լեգիտիմության և անձի հիմնական իրավունքներին նախատեսվող միջամտության համաչափությունը գնահատելու տեսանկյունից (այս մասին տե՛ս ստորև՝ մաս 2.3):

## 2. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ

### 2.1. Սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության վերլուծություն

Օրենքով նախատեսված կարգավորումները, ինչպես արդեն վերը նշվեց, նախատեսում են օրինական եկամուտներով չհիմնավորված գույքը բռնագանձելու հնարավորություն և ընթացակարգ: Դրանով իսկ տեղի է ունենում միջամտություն անձի սեփականության իրավունքին և այդ միջամտության իրավաչափությունը պետք է դառնա ստուգման ու գնահատման առարկա:

Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքը երաշխավորվում է Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներով: Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը, այդ թվում՝ մասնավոր սեփականությունը: Սահմանադրության 60-րդ հոդվածը երաշխավորում է անձի օրինական հիմքով



ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքը (մաս 1): Սեփականության իրավունքը, որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ, ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն<sup>13</sup>:

Սեփականության իրավունքը ունի նաև միջազգային իրավական ամրագրում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 17) և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) թիվ 1 արձանագրությունում (հոդված 1):

Ինչպես Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված գրեթե բոլոր հիմնական իրավունքները, այնպես էլ սեփականության իրավունքը, բացարձակ իրավունք չէ և Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դեպքերում ենթակա է սահմանափակման:

Այսպես, Սահմանադրությունը նախատեսում է, որ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ սահմանելով այն լեգիտիմ նպատակները, ի պաշտպանություն որոնց դա կարող է տեղի ունենալ, այն է՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով (հոդված 60, մաս 3):

Միաժամանակ, Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի: Այսինքն՝ այն դեպքերում, երբ սահմանափակումն իր բնույթով լինի այնքան ինտենսիվ, որ հանգեցնի սեփականությունից զրկման, դա կարող է տեղի ունենալ միայն դատարանի որոշմամբ: Սահմանադրական դատարանը, անդրադառնալով 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասին, որը գրեթե նույնաբովանդակ է 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի հետ, նշել է, որ «ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է սեփականության անձեռնմխելիության դատական երաշխիքը: Այդ դրույթում օգտագործված՝ «սեփականությունից զրկում» հասկացությունը սահմանադրաիրավական հարաբերությունների ոլորտում ունի ինքնավար բովանդակություն»<sup>14</sup>: Սահմանադրական դատարանը, նշված ՍԴՈ-903 որոշման մեջ առանձնացնելով

<sup>13</sup> ՍԴՈ-1432, 4.1 կետ, <https://www.concourt.am/armenian/decisions/common/2018/pdf/sdv-1432.pdf>:

<sup>14</sup> ՍԴՈ-903, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=59485>:

սեփականության իրավունքը սահմանափակելու՝ Սահմանադրությամբ թույլատրվող դեպքերը, սեփականությունից զրկումը բնութագրել է որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն և գտել է, որ սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ են հետևյալ հիմնական պարտադիր տարրերը.

- 1) սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ՝ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում,
- 2) սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց,
- 3) սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավազորությունների միաժամանակյա և լիակատար դադարում՝ առանց շարունակականության երաշխավորման:

Օրենքով նախատեսված կարգավորումների արդյունքում կարող են շոշափվել ինչպես Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասը, այնպես էլ նույն հոդվածի 4-րդ մասը: Օրենքի կիրարկման արդյունքում սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության բնույթը՝ սեփականության իրավունքի սահմանափակում (մաս 3), թե՛ սեփականության իրավունքից զրկում (մաս 4) գնահատելը մեծապես կախված է նաև կոնկրետ գործի փաստական հանգամանքներից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) ևս առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման արդյունքում տեղի ունեցած միջամտությունը, կախված կոնկրետ գործի հանգամանքներից, մի դեպքում՝ որակել է որպես «գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողություն»<sup>15</sup>, իսկ մեկ այլ դեպքում՝ որպես սեփականությունից զրկում<sup>16</sup>:

## 2.2. Սեփականության հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունը

Անձի հիմնական իրավունքի նկատմամբ ցանկացած միջամտություն պետք է համապատասխանի Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված պահանջներին, այսինքն՝ առաջին հերթին պետք է ունենա Սահմանադրությամբ սահմանված նպատակ:

<sup>15</sup> Todorov and Others v. Bulgaria, 13 July 2021, կետ 181,

<sup>16</sup> Նույն կետում:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված են այն նպատակները, ի շահ որոնց կարող է սահմանափակվել անձի սեփականության իրավունքը, այն է՝

- հանրության շահերի պաշտպանություն կամ
- այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանություն:

Հիմնական իրավունքների սահմանափակման համաչափությունը գնահատելու համար կարևորագույն նախապայմաններից մեկը Օրենքով հետապնդվող նպատակի որոշակիացումն է: Մինչդեռ, ինչպես հիշատակված է վերևում<sup>17</sup>, Օրենքով հետապնդվող նպատակը հստակ չէ, ինչն էլ խնդրահարույց է դարձնում ինչպես Օրենքի առանձին դրույթների, այնպես էլ ողջ Օրենքի սահմանադրականությունը: Հիմնական իրավունքը սահմանափակող օրենքով հետապնդվող նպատակի որոշակիացման կարևորությունն ընդգծվել է նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) կողմից 2010թ. Բուլղարիայի «Ապօրինի ձեռք բերված գույքի հօգուտ պետության բռնագանձման մասին»<sup>18</sup> օրենքի նախագծի վերաբերյալ կարծիքում<sup>19</sup>: Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է, որ «Կարևոր է ճշգրիտ և սպառիչ կերպով նախագծում ձևակերպել հանրային և մասնավոր այն շահը, որը հետապնդվում է Օրենքով: Նշվածը բռնագանձման գործերով արդարադատություն իրականացնող դատարանների համար կծառայի որպես հիմք «համաչափության ստուգման» համար»<sup>20</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ Օրենքը հստակորեն չի սահմանում դրանով հետապնդվող սահմանադրական նպատակը, իսկ որոշ դեպքերում՝ առկա են հակասություններ Օրենքի նախագծի Հիմնավորման և արդեն իսկ ընդունված Օրենքի դրույթների միջև<sup>21</sup>, այնուամենայնիվ, հաշվի առնելով միջազգային փորձը<sup>22</sup>, կարելի է պնդել, որ Օրենքով նախատեսված կարգավորումների արդյունքում սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության համար որպես լեգիտիմ հիմք կարող է ծառայել Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանրային շահի պաշտպանությունը: ՄԻԵԴ-ը ևս գտել է, որ

<sup>17</sup> Այս մասին տե՛ս մաս 1:

<sup>18</sup> CDL(2010)002:

<sup>19</sup> Բուլղարիայի օրենքը նախատեսում էր «Ապօրինի ձագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված նմանատիպ բռնագանձման կառուցակարգ:

<sup>20</sup> Venice Commission, Interim Opinion on the Draft Act on Forfeiture in Favour of the State of Illegally Acquired Assets of Bulgaria, CDL-AD(2010)010, կետ40,

[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)010-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)010-e):

<sup>21</sup> Մաս 1:

<sup>22</sup> Նույն տեղում:

հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի առգրավումը գործում է, ընդհանուր շահերից ելնելով, որպես կանխարգելիչ միջոց՝ հանցավոր գործունեությամբ զբաղվելու մտադրություն ունեցողների համար, ինչպես նաև երաշխավորում է, որ հանցագործությունը եկամտի աղբյուրի չվերածվի<sup>23</sup>:

Վերոհիշյալից կարելի է եզրահանգել, որ Օրենքով նախատեսված կարգավորումների արդյունքում սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը կունենա սահմանադրորեն արդարացված լեգիտիմ նպատակ, այսինքն՝ կհամապատասխանի Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանրային շահի պաշտպանությանը միայն այն դեպքում, երբ առկա է.

- 1) հանրորեն վտանգավոր արարք կամ դրա կատարման վերաբերյալ հիմնավոր կասկած և
- 2) պատճառահետևանքային կապ արարքի և ապօրինի ծագում ունեցող գույքի միջև:

Սեփականության իրավունքի միջամտության սահմանադրական լեգիտիմ նպատակը պետք է կոնկրետացվի համապատասխան օրենքի դրույթներում: Մինչդեռ, սեփականության իրավունքին միջամտությամբ հետապնդվող նպատակի լեգիտիմության տեսանկյունից, Օրենքում խնդրահարույց են.

- 1) Օրենքով գույքի օրինականության ստուգման համար նախատեսված հիմքերը (տե՛ս ստորև՝ մաս 2.2.1),
- 2) Օրենքով նախատեսված գործընթացները գործի դնելու համար հիմք հանդիսացող հանցատեսակների չափազանց լայն շրջանակը (տե՛ս ստորև՝ մաս 2.2.2):

### **2.2.1. Օրենքով գույքի օրինականության ստուգման համար նախատեսված հիմքերը**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է առաջին հերթին դիտարկել, թե անձի գույքի օրինականության ստուգման համար որպես ազդակ համարվող հիմքերը, որոնց արդյունքում կարող են գործի դրվել Օրենքով նախատեսված բոլոր կառուցակարգերը, որքանով են համահունչ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանրային շահի պաշտպանության հետ:

<sup>23</sup> Denisova and Moiseyeva v. Russia, § 58,

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված են 5 հիմքեր, որոնց առկայության դեպքում իրավասու մարմինը պետք է սկսի անձի գույքի օրինականության ստուգում: Նշված հիմքերի որոշ մասի դեպքում ուսումնասիրություն սկսելը չի կարող հետապնդել Սահմանադրության նախատեսված լեգիտիմ նպատակ, այլ կերպ ասած՝ այդ հիմքերը չեն բավարարում հանրային շահի պաշտպանությանն ուղղված լինելու սահմանադրական պահանջը:

### 2.2.1.1. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն իրավասու մարմինը կարող է ուսումնասիրություն սկսել այն դեպքում, երբ.

- 1) *առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է Օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարումը, և*
- 2) *տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով:*

Այս հիմքով ուսումնասիրություն սկսելու համար հիմնական ազդակ է համարվում օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտը, իսկ որպես լրացուցիչ պահանջներ են նախատեսվում քրեական գործի նյութերի հիման վրա ապօրինի ծագում ունեցող գույքի մասին կասկածը և այն հանգամանքը, որ այդ գույքը չի բռնագանձվել դատավճռով: Վերը նշված հիմքի տեսանկյունից նախ հարց է ծագում, թե ինչո՞ւ գույքի շրջանակը չի նույնականացվել և բռնագանձվել հենց քրեական դատավարության շրջանակներում:

«Քրեական օրենսգրքի 103.1 հոդվածը հնարավորություն է տալիս բռնագանձել հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները: Քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը նախատեսում է, որ դատարանը դատավճիռ կայացնելիս լուծում է նաև այն հարցը, թե ապացուցված է արդյոք, որ բռնագանձման ենթակա գույքը ստացվել է հանցագործության կատարման արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից կամ օգտագործվել է կամ նախատեսվել է օգտագործվել որպես հանցագործության գործիք: Վերոհիշյալ օրենսդրության կարգավորումներից բխում է, որ եթե հարուցված քրեական գործի շրջանակներում բացահայտվում է հանցագործության

արդյունքում ստացված (կամ այլ կերպ փոխկապակցված) գույք, ապա այն պետք է (և հնարավոր է) բռնագանձել քրեական դատավարության շրջանակներում:

Քրեական վարույթի շրջանակներում գույքը չբռնագանձելը կարող է պայմանավորված լինել երկու այնպիսի գործոնով, որոնք անմիջականորեն ազդում են գույքի բռնագանձմամբ հետապնդվող նպատակի լեգիտիմության վրա.

- 1) վարույթն իրականացնող մարմինը ժամանակին չի բացահայտել և դատարանին չի ներկայացրել նման գույքի մասին տեղեկություններ,
- 2) այդ տեղեկությունները եղել են ոչ բավարար, որի պայմաններում դատարանը չի գտել կապ հանցագործության և այդ գույքի միջև (այս մասին տե՛ս նաև ստորև, կետ 30):

Առաջին դեպքում, ստացվում է, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը հնարավորություն է ընձեռում անձի իրավունքների պաշտպանության համար շատ ավելի ցածր պաշտպանություն նախատեսող վարույթի միջոցով իրականացնել այդ գույքի բռնագանձում այն պարագայում, երբ *քրեական գործի նյութերում* առկա են եղել հանցագործության արդյունքում ստացված գույքի մասին տեղեկություններ, և դրանք չեն ներկայացվել դատարանին վարույթն իրականացնող մարմնի անփութության կամ նման այլ պատճառով: Դրանով իսկ բռնագանձումը ձեռք է բերում պատժիչ բնույթ, ինչը բնականաբար չի կարող իրականացվել քաղաքացիական դատավարության շրջանակներում, ավելին՝ առանց անձի մեղքը ապացուցելու: Ուստի Օրենքով նախատեսված այս հիմքով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ սկսելու համար որպես ազդակ կարող է պիտանի լինել ոչ թե «*քրեական գործի նյութերը*», այլ միայն վերջնական դատական ակտը, որտեղ դատարանը, նկատի ունենալով քրեական դատավարության համար պահանջվող ապացուցման բարձր չափանիշները, չի կարող ապացուցված համարել, որ գույքը ծագում է տվյալ հանցագործությունից:

Պատճառահետևանքային կապի առումով անդրադառնալով համաչափության հարցին՝ ՄԻԵԴ-ը ևս արձանագրել է, որ յուրաքանչյուր պարագայում պետք է հիմնավորվի և գնահատվի կապը գույքի բռնագանձմանը հանգեցնող ենթադրյալ հակաօրինական վարքագծի և դրա արդյունքում առաջացած գույքի միջև: Դատարանը պետք է նաև հաշվի առնի այն հանգամանքը, թե որքանով է հավանական, որ որևէ նյութական շահ է առաջացել հանցագործությունից<sup>24</sup>:

<sup>24</sup> Todorov and Others v. Bulgaria, 13 July 2021, կետեր 227-231:

Միաժամանակ, խնդրո առարկա հիմքը պարունակում է մի շարք այլ խնդրահարույց և թերի կարգավորումներ: Մասնավորապես, այս հիմքով ուսումնասիրություն սկսելու համար կարող է ազդակ հանդիսանալ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված ցանկացած հանցագործությունը հաստատող վերջնական դատական ակտը: Քանի որ սահմանված հանցատեսակներից ոչ բոլորն են հանդիսանում շահույթ առաջացնող հանցագործություններ<sup>25</sup>, ապա այդ հանցատեսակների պարագայում չկա ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ նախատեսելու համար իրավաչափ նպատակ:

Հիմնական իրավունքներին միջամտության համաչափության տեսանկյունից մեկ այլ լրջագույն խնդիր է այն, որ Օրենքով նախատեսված այս հիմքը չունի որևէ ժամանակային սահմանափակում: Պարզ չէ, թե մեղադրական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ինչ ժամկետների ընթացքում կարող է բարձրացվել գույքի ծագման օրինականության կասկած և գործի դրվել Օրենքով նախատեսված կառուցակարգերը: Այս առումով, Օրենքը բռնագանձման վարույթ իրականացնող մարմնի համար որևէ ժամանակային սահմանափակում չի նախատեսում, ինչը նշանակում է, որ գործընթացը կարող է հարուցվել դատապարտումից և անգամ պատժի կրումից շատ տարիներ անց: Այս առումով, օրինակ, նույն Բուլղարիայի 2005թ. օրենքի համաձայն՝ գույքի բռնագանձման վարույթ կարող էր հարուցվել վերջնական դատական ակտից հետո 1 ամսվա ընթացքում<sup>26</sup>:

### 2.2.1.2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն իրավասու մարմինը կարող է ուսումնասիրություն սկսել այն դեպքում, երբ.

- 1) հարուցված քրեական գործով *անձը, որպես մեղադրյալ է ներգրավվել* սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, և
- 2) առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք:

Ուսումնասիրություն սկսելու վերոհիշյալ դեպքի հետ փոխկապակցված պետք է դիտարկել նաև Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ օրենքով նախատեսված վարույթին զուգահեռ ընթացող քրեական գործի վարույթի

<sup>25</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս մաս 2.2.2:

<sup>26</sup> Todorov and Others v. Bulgaria, 13 July 2021, կետ 102:

ավարտվելը, այդ թվում՝ արդարացման դատավճռի կայացումը կամ արդարացնող հիմքով քրեական գործի վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը հիմք չեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դադարեցման համար:

Համադրելով նշված երկու դրույթները՝ կարող ենք եզրահանգել, որ անձի նկատմամբ գույքի բռնագանձման գործընթացը կարող է տեղի ունենալ անգամ այն պարագայում, երբ ապացուցվի, որ որևէ հանցագործություն տեղի չի ունեցել: Արդյունքում կարող է ստեղծվել իրավիճակ, երբ սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը չունենա որևէ լեգիտիմ նպատակ, քանի որ արդարացնող հիմքերով կկարճվի քրեական գործի վարույթը կամ դատական վերջնական ակտով կհերքվի անձի որևէ առնչակցությունը այն հանցագործությանը, որից ենթադրաբար ստացվել էր ապօրինի ծագում ունեցող գույքը: Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք վերը, եթե չկա հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործության դեպք, ապա, չի կարող լինել նաև սեփականության իրավունքը սահմանափակելու համար լեգիտիմ նպատակ:

Օրենքը լուրջ է այն հարցի վերաբերյալ, թե ի՞նչ հարաբերակցություն են ունենալու միմյանց զուգահեռ ընթացող Օրենքով նախատեսված վարույթը և քրեական գործի վարույթը: Այս առումով պարզ չէ նաև, թե ի՞նչ սկզբունքով է որոշվելու՝ ո՞ր վարույթի շրջանակներում իրականացնել գույքի բռնագանձումը՝ քրեակա՞ն, թե՞ Օրենքով նախատեսված, քանի որ դեպքերի հիմնական մասում բռնագանձման առարկան նույնանալու է:

### 2.2.1.3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքը

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն իրավասու մարմինը կարող է գույքի բռնագանձման վարույթ սկսել այն դեպքում, երբ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված *օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով* հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

Դիտարկելով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ուսումնասիրություն սկսելու հիմքերը (դրանց վերաբերյալ վերը ներկայացված դիտարկումների հաշվառմամբ) պարզ է դառնում, որ 1-4-րդ կետերով նախատեսված բոլոր հիմքերը ուղղակիորեն կապված են հանցագործության դեպքի հետ, այսինքն՝ Օրենքով նախատեսված ուսումնասիրություն սկսելու համար անհրաժեշտ է:



- դատարանի կողմից հաստատված հանցագործության դեպք (1-ին կետ),
- հարուցված քրեական գործ (2-րդ կետ),
- որևէ օբյեկտիվ պատճառով քրեական գործի հարուցման անհնարինություն (3-րդ կետ), կամ
- հարուցված քրեական գործի կասեցում (4-րդ կետ):

Այս առումով ուսումնասիրություն սկսելու համար որպես լեգիտիմ հիմք կարող է լինել միայն հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործության դեպքը, քանի որ միայն այդ ժամանակ կարելի է ողջամտորեն ենթադրել, որ դրա արդյունքում ստացվել է մեծ չափերի հասնող շահույթ:

Ի տարբերություն Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերի՝ նույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքի դեպքում որպես նախապայման չի պահանջվում ոչ հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործության դեպքի առկայություն և ոչ էլ անգամ դրա իրականացման վերաբերյալ հիմնավոր կասկած: Հետևաբար, եթե չկա հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործության դեպք, ապա չի էլ կարող ուսումնասիրության ենթարկվող գույքը որևէ պատճառահետևանքային (ուղղակի կամ անուղղակի) կապ ունենալ հանցագործության հետ: Նման պարագայում, ըստ էության, վերանում է այն լեգիտիմ նպատակը, ի շահ որի Օրենքով կարող էր սահմանափակվել անձի սեփականության իրավունքը: Ուստի **սեփականության սահմանադրական իրավունքի նկատմամբ Օրենքով նախատեսված նման լայն միջամտությունը չի հեղապնդում Սահմանադրությամբ պաշտպանված որևէ լեգիտիմ նպատակ:** Իսկ այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հարուցվի քրեական գործ, ուսումնասիրություն սկսելու հիմքը կհամընկնի Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի հետ:

Միաժամանակ, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով<sup>27</sup> սահմանվում է, որ եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում այն անձի վերաբերյալ, ում նկատմամբ այդ միջոցառումներն իրականացվում են, ձեռք են բերվել տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ միջոցառումներն անցկացնելու մասին որոշմամբ, ապա դրանք չեն հանդիսանում ապացույցներ և ենթակա են ոչնչացման, բացառությամբ այն դեպքերի, երբ՝ «2) ստացված տեղեկությունները պարունակում են ծանր կամ

<sup>27</sup> Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 22.10.2007թ., ՀՀՊՏ 2007.11.28/59(583), հոդ.1197, ՀՕ-223-Ն:

առանձնապես ծանր հանցագործության կամ դրա նախապատրաստման վերաբերյալ տեղեկություններ կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործընթաց սկսելու կամ սկսված վարույթին առերևույթ առնչվող տվյալներ»: Փաստորեն մինչև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի փոփոխությունները (16.04.2020թ., ՀՕ-250-Ն) օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում անձի վերաբերյալ ձեռք բերված «կողմնակի» տեղեկությունները կարող էին օգտագործվել միայն, եթե դրանք առնչվում էին *ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների*: Իսկ ապօրինի գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրմամբ պայմանավորված 16.04.2020թ. փոփոխությունների արդյունքում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների հետ նույն նժարի վրա է դրվել նաև գույքի բռնագանձման գործընթացը և ձեռք բերված օպերատիվ տվյալները հնարավոր է դառնում օգտագործել բռնագանձման վարույթ սկսելու համար: Արդյունքում առաջացել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջոցով անձի հիմնական իրավունքներին միջամտության լայն դաշտ և դրանից բխող ռիսկեր, որոնք խնդրահարույց են անձի հիմնական իրավունքներին միջամտության համաչափության տեսանկյունից:

ՄԻԵԴ-ը, անդրադառնալով Սերբիայի 2008թ. «Հանցագործության արդյունքում ստացված գույքի բռնագանձման մասին» օրենքին, նշել է, որ նշված օրենքի 2-րդ հոդվածի համաձայն բռնագանձում կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ առկա է վերջնական դատական ակտ և, հետևաբար, բռնագանձման *որոշումը կապված է որոշակի ծանրության հանցագործության կատարման փաստի հետ և կախված է դրանից*<sup>28</sup>:

#### 2.2.1.4. 2021թ. դեկտեմբերի 14-ին հրապարակված նախագծով առաջարկվող նոր հիմքը

Արդարադատության նախարարության կողմից իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում 2021թ. դեկտեմբերի 14-ին հանրային քննարկման է ներկայացվել Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ (այսուհետ նաև՝ Նախագիծ)<sup>29</sup>: Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված ուսումնասիրություն սկսելու վերոհիշյալ հիմքերի շարքում ավելացնել նոր հիմք, այն է՝

<sup>28</sup> Milorad Ulemek v. Serbia, կետ 48:

<sup>29</sup> <https://www.e-draft.am/projects/3819/about>:

«6) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ այլ անձի պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:»:

Նախագծով առաջարկվող ուսումնասիրություն սկսելու նոր հիմքը ևս խնդրահարույց է Սահմանադրության տեսանկյունից, քանի որ՝

1. նշված հիմքով ուսումնասիրություն սկսելու համար չի պահանջվում որևէ ուղղակի կամ անուղղակի պատճառահետևանքային կապ հանցագործության հետ, և
2. այս հիմքը խնդրահարույց է նաև իրավական որոշակիության տեսանկյունից, քանի որ հնարավորություն է տալիս վարույթ իրականացնող մարմնին Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմքով սկսված ուսումնասիրության ընթացքում սկսել մեկ այլ անձի գույքի ուսումնասիրություն միայն այն հիմքով, եթե առկա են կասկածներ վերջինիս պատկանող ապօրինի գույքի մասին:

### **2.2.2. Օրենքով նախատեսված գործընթացները գործի դնելու համար հիմք հանդիսացող հանցատեսակների չափազանց լայն շրջանակը**

Օրենքով նախատեսված բռնագանձման գործընթացները գործի դնելու համար Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նախատեսում է հանցագործությունների բավական լայն շրջանակ, որոնք սեփականության սահմանադրական իրավունքի նկատմամբ միջամտության չափազանց լայն դաշտ են բացում՝ կասկածի տակ դնելով ինչպես ընտրված միջոցով հետապնդվող նպատակի լեգիտիմությունը, այնպես էլ նպատակին հասնելու միջոցների համաչափությունը:

Օրենքով նախատեսված հանցատեսակների ցանկը ընդգրկում է այնպիսիք, որոնք որևէ եզր չունեն միջազգային պրակտիկայում սովորաբար թույլատրելի այն հանցատեսակների հետ, որոնց պարագայում հիմնավորված է համարվում գույքի բռնագանձման այս արտակարգ մեխանիզմի կիրառումը, այդ թվում՝ ընտրողներին կաշառք տալը, վարկը ոչ նպատակային օգտագործելը, ձեռնարկատիրական գործունեությանը ապօրինի մասնակցելը, արհեստավարժ մարզամրցումներին և հանդիսավոր առևտրային մրցումների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը արդարացվում է այնպիսի մեծ հանրային վտանգավորություն ունեցող հանցատեսակների դեմ պայքարի անհրաժեշտությամբ, ինչպիսիք են՝ թրաֆիքինգը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, փողերի վճարումը և ահաբեկչության

Ֆինանսավորումը, որոնց դեմ պայքարում իրավամբ անհրաժեշտ են լրացուցիչ գործիքակազմեր<sup>30</sup>:

Այս առումով վկայակոչման է արժանի ՄԻԵԴ-ը՝ Տոդորովն ընդդեմ Բուլղարիայի գործով անդրադարձել է Բուլղարիայի 2005թ. օրենքին, նշելով. «...2005թ. օրենքի կիրարկման շրջանակը լայն էր, քանի որ *դրա հիման վրա բռնագանձման վարույթ կարող էր հարուցվել բազմաթիվ հանցագործությունների պատճառով, և ոչ միայն այնպիսի հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործությունների*, որոնք քննվել են Դատարանի կողմից և ներկայացված են վերը, մասնավորապես, ինչպիսիք են Մաֆիայի հետ կապված հանցագործությունները, ապօրինի թմրաշրջանառությունը, հանրային ծառայությունում կոռուպցիան և փողերի վլացումը: Դատարանը գտնում է, որ 2005թ. օրենքով նախատեսված ոչ բոլոր հանցատեսակներն են, որ ողջամտորեն կարող են շահույթ գեներացնել: Այսպիսով, 2005թ. **օրենքով նախատեսված բռնագանձման ռեժիմը ոչ բոլոր դեպքերում էր վերաբերում հանգամանքներին, որոնք կարող են որակվել որպես «բացառիկ»**, օրինակ՝ ինչպես *Silickienė and Telbis and Viziteu*» գործերում»<sup>31</sup> :

Օրենքով նախատեսված հանցատեսակների այնպիսի լայն շրջանակը, որոնց արդյունքում ողջամտորեն հնարավոր չէ էական շահույթի ստացումը, չի բխում Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված լեգիտիմ նպատակից՝ հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործությունների արդյունքում ստացված գույքի բռնագանձում, ի շահ որի մարդու հիմնական իրավունքի նկատմամբ այնպիսի ինտենսիվ միջամտությունը կարող է համարվել իրավաչափ:

### 2.3. Օրենքի համաչափությունը

Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքը, հիմնական իրավունքների միջամտության համար լեգիտիմ նպատակից բացի, պահանջում է, որ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները լինեն պիտանի և անհրաժեշտ՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու*

<sup>30</sup> «Լոյս» հիմնադրամ, Դիտարկումներ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, 14.10.2019թ., կետ 2.5, <https://tinyurl.com/yc86yfk8>: «Լոյս» հիմնադրամ, Լրամշակված դիտարկումներ Ազգային ժողով ներկայացված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, 03.03.2020թ., մաս 3, կետ 4, <https://tinyurl.com/y7n9tpho>:

<sup>31</sup> Todorov and Others V. Bulgaria, 13 July 2021, կետ 200:

համար, իսկ սահմանափակման համար ընտրված միջոցները համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Համաչափության սկզբունքի այս պահանջի նպատակն է սեփականատիրոջ և հանրության շահերի կամ այլոց իրավունքների պաշտպանության միջև ապահովել արդար հավասարակշռում (fair balance)՝ մի կողմից ճանաչելով անձի սեփականության իրավունքը, մյուս կողմից՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգով և դեպքերում նախատեսելով նաև այդ իրավունքը սահմանափակելու հնարավորություն:

Հետապնդվող նպատակին հասնելու համար ընտրված միջոցը կարող է համարվել *պիտանի* միայն այն դեպքում, եթե այն առնվազն կարող է նպաստել այդ նպատակին հասնելուն: Հիմնական իրավունքին միջամտել *անհրաժեշտ* է միայն այն դեպքում, երբ հետապնդվող նպատակին անհնարին է հասնել մեկ այլ, սակայն նույնչափ արդյունավետ ճանապարհով, որն ավելի քիչ կսահմանափակի խնդրո առարկա հիմնական իրավունքով պաշտպանված իրավական բարիքը: Բացի այդ, միջամտությունը պետք է *համարժեք կամ չափավոր* լինի, այսինքն՝ միջամտության սաստկությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը և կշռին:

### 2.3.1. Կապը հանցագործության և բռնագանձվող գույքի միջև

Արդեն իսկ նշվել է<sup>32</sup>, որ Օրենքի տեսանկյունից անձի սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը կարող է ծառայել հանրային շահի պաշտպանությանը և լինել հավասարակշռված, միայն այն դեպքում, երբ առկա կլինի այնպիսի հանրային մեծ վտանգավորություն ներկայացնող քրեորեն պատժելի արարք կամ դրա վերաբերյալ հիմնավոր կասկած, որը ի վիճակի է գեներացնել էական շահույթ:

Օրենքը, սակայն, ամբողջությամբ ելնում է այն տրամաբանությունից, որ պարտադիր չէ որևէ պատճառահետևանքային կապի առկայություն ապօրինի ծագում ունեցող գույքի և այն հանցատեսակների միջև, որոնք ամրագրված են Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետում: Այս խզումը *expressis verbis* արտահայտված է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, 10-րդ հոդվածի 3-րդ մասում և Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված կարգավորումների արդյունքում:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է «ապօրինի ծագում ունեցող գույք» հասկացությունը, որի համաձայն՝ այդպիսի գույք է

<sup>32</sup> Մաս 1:

համարվում գույք, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը սույն օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները): Օրենքը, սակայն, չի տարբերակում «ապօրինի ծագում ունեցող գույքի» առաջացման հիմքը, այսինքն՝ այդպիսի գույքը առաջացել է քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարման, վարչական իրավախախտման, թե՛ հնարավոր է նաև քաղաքացիաիրավական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում (օրինակ՝ փոխառության արդյունքում ստացված և այնուհետև չվերադարձված գումար):

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ Օրենքով նախատեսված վարույթին զուգահեռ ընթացող քրեական գործի վարույթի ավարտվելը, այդ թվում՝ արդարացման դատավճռի կայացումը, կամ արդարացնող հիմքով քրեական գործի վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը հիմք չեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դադարեցման համար: Նշված կարգավորումը կարող է գործել այն դեպքում, երբ անձի գույքի օրինականության նկատմամբ ուսումնասիրությունը սկսվել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, այն է՝ հարուցված քրեական գործով անձը, որպես մեղադրյալ է ներգրավվել Օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք: Ուսումնասիրություն սկսելու հիմքերի իրավաչափության քննարկման ժամանակ<sup>33</sup> ներկայացվել է, որ այն պահից, երբ խզվում է հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործության և ենթադրաբար ապօրինի ծագում ունեցող գույքի միջև պատճառահետևանքային կապը, վերանում է նաև Սահմանադրությամբ նախատեսված լեգիտիմ նպատակը՝ հանրային շահի պաշտպանությունը, որի արդյունքում սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը դառնում է անհամաչափ:

Վերոհիշյալ տրամաբանությամբ Օրենքն ինքնին, ընդհանուր առմամբ Սահմանադրությանը հակասող է դառնում՝ հաշվի առնելով Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումները: Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կարող է կայացնել վճիռ՝ *հիմք ընդունելով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը*, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի

<sup>33</sup> Տե՛ս վերևում՝ մաս 2.2.1:

*հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով: Այսինքն՝ գույքի բռնագանձման վերաբերյալ վերջնական դատական ակտ կայացնելու համար միայն անհրաժեշտ է, որպեսզի ապացուցվի, որ անձը իր գույքը չի հիմնավորել օրինական եկամուտներով: Օրենքը չի նախատեսում որևէ կարգավորում, այլ հակառակը՝ խզում է պատճառահետևանքային կապը (ուղղակի կամ անուղղակի) հանցագործության և ենթադրաբար ապօրինի ծագում ունեցող գույքի միջև:*

Միմիայն այն հանգամանքը, որ անձին պատկանող գույքի օրինականությունը չի հիմնավորվում օրինական եկամուտներով, ինքնին դեռ բավարար չէ եզրահանգելու համար, որ այն ձեռք է բերվել հանցագործության կատարման արդյունքում: Այդ փաստը կարող է հաստատվել միայն այն դեպքում, երբ կներկայացվեն բավարար հիմնավորումներ, որով կապացուցվի հանցագործության և բռնագանձվող գույքի միջև պատճառահետևանքային կապը:

Վերոհիշյալ պնդումը հիմնավորվում է ինչպես Բուլղարիայի փորձով, որտեղ գործում է համանման կառուցակարգ, այնպես էլ դրա վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից տրված իրավական գնահատականով: Այսպես, մինչև 2014 թվականը Բուլղարիայի ազգային դատարանները 2005 թվականի օրենքի կիրառման գործընթացում տարբեր կարծիքներ ունեին հանցավոր գործունեության և բռնագանձման ենթակա գույքի միջև պատճառահետևանքային կապ հաստատելու անհրաժեշտության վերաբերյալ: Որոշ դեպքերում դատարանները գտնում էին, որ ոչ մի պատճառահետևանքային կապ չպետք է ապացուցվի, քանի որ 2005 թվականի օրենքի 4-րդ բաժնի 4-րդ կետը կանխավարկած էր սահմանում, որ բոլոր այն ակտիվները, որոնց օրինական աղբյուրի առկայությունը չի հաստատվել, ներկայացնում են հանցագործության եկամուտներ (տե՛ս Решение № 671 от 9.11.2010 г. на ВКС по гр. д. № 875/2010 г., IV г. о .; Решение № 156 от 29.05.2013 г. на ВКС по гр. д. 890/2012 г., IV г. о.): Այլ դեպքերում դատարանները պահանջում էին պատճառահետևանքային կապի հաստատում՝ գտնելով, որ նույնիսկ այնտեղ, որտեղ ապացուցված չէր, որ եկամտի օրինական աղբյուր գոյություն ունի, դա ինքնաբերաբար չի նշանակում, որ տվյալ ակտիվները հանդիսանում են հանցագործությունից ստացված եկամուտներ»<sup>34</sup>: Քննելով բուլղարական դատարանների այս իրարամերժ դիրքորոշումները՝ Բուլղարիայի Գերագույն դատարանը 2014 թվականի հունիսի 30-ին կայացրած մեկնաբանող որոշմամբ (Թողարկված որոշում № 7/2014 г. на ВКС по т. Д. № 7/2013 г., ОСГК) սահմանեց, որ հանցագործություն կատարած անձի կողմից գույքի ձեռքբերումը պետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապակցվի հանցագործությունից ստացված եկամուտների հետ: ՄԻԵԴ-ը շեշտադրել է նաև այն հանգամանքը, որ «բոլոր

<sup>34</sup> Todorov and Others v. Bulgaria, 13 July 2021, կետ 104:

դեպքերում այդ կապը [պետք է] հաստատվեր, կամ դրա գոյությունը [պետք է] ենթադրելի լիներ»: Գերագույն դատարանը նաև նշել է, որ **քննարկվող ենթադրությունը (կանխավարկածը) պետք է լինի «տրամաբանորեն հիմնավորված»** և **«հիմնված փաստերի և հանգամանքների վրա»** և **պատճառահետևանքային կապ չհաստատելը կնշանակի, որ ամբաստանյալի սեփականության իրավունքին ցանկացած միջամտությունը կլինի անհամաչափ**: Գերագույն դատարանը նաև ընդգծել է, որ «Ակտիվի համար օրինական աղբյուրը հաստատել չկարողանալը չի փոխարինում հանցավոր գործունեության հետ կապված հիմնավորված ենթադրությունը, այլ Հանձնաժողովին պարզապես ազատում է նման կապն առանց կասկածի ապացուցելու բեռից»: Արդյունքում, Գերագույն դատարանը վճռել է, որ հանցավոր գործունեության (որի համար ամբաստանյալը դատապարտվել էր) և բռնագրավված գույքի միջև որևէ պատճառահետևանքային կապ չապացուցելը նշանակում է, որ ամբաստանյալի գույքային իրավունքներին միջամտելը անհամաչափ կլինի<sup>35</sup>: Վկայակոչելով Բուլղարիայի Գերագույն դատարանի վերոհիշյալ որոշումը, այդուհետ Բուլղարիայի ազգային դատարանները մերժել են Հանձնաժողովի կողմից ներկայացված 2005թ. օրենքով բռնագանձման մասին դիմումները՝ համարելով, որ պատճառահետևանքային կապ չի հաստատվել բռնագանձում պահանջվող ակտիվների և ամբաստանյալի հանցավոր գործունեության միջև, չնայած այն փաստին, որ վերջիններիս եկամուտների մասով ապացուցված չէր որևէ օրինական աղբյուրի առկայությունը<sup>36</sup>:

Ուշագրավ է, որ Տոդորովն ընդդեմ Բուլղարիայի գործով կայացված որոշման մեջ ՄԻԵԴ-ն անդրադարձել է Բուլղարիայի Գերագույն դատարանի 2014 թվականի վերոհիշյալ մեկնաբանական որոշմանը, *նշելով, որ միջամտության համաչափությունը գնահատելիս կիտրակի դրանում արտահայտված դիրքորոշմանը*, որի համաձայն բռնագրավման ենթակա գույքի և հանցավոր գործունեության միջև պետք է ուղղակի կամ անուղղակի պատճառահետևանքային կապ հաստատվի, կամ այդ կապը պետք է ենթադրելի լինի: Այսպիսով, ՄԻԵԴ-ը նույնպես շեշտել է, որ «ՄԻԵԿ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն պահանջվող հավասարակշռության ապահովումը գնահատելիս առանցքային կհամարի Գերագույն դատարանի կողմից պահանջվող պատճառահետևանքային կապի հաստատումը, մասնավորապես՝ Դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համատեքստում կստուգի, թե արդյոք ազգային իշխանությունները

<sup>35</sup> Todorov and Others v. Bulgaria, 13 July 2021, կետ 105 և 106:

<sup>36</sup> Todorov and Others v. Bulgaria, 13 July 2021, կետ 107:



ներկայացրել են առնվազն որոշ տվյալներ, որոնք հիմնավորում են բռնագանձման ենթակա ակտիվների ծագումը նախատեսված իրավախախտումներից»<sup>37</sup>:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք ընդգծել, որ Օրենքի այն տրամաբանությունը, որի արդյունքում հաշվի չի առնվում պատճառահետևանքային կապը Օրենքով նախատեսված արարքների կատարման և բռնագրավման ենթակա գույքի միջև, չի կարող համարվել անհրաժեշտ միջոց՝ անձի սեփականության իրավունքին Օրենքով նախատեսված ինտենսիվ միջամտության տեսանկյունից:

### 2.3.2. Ուսումնասիրության լայն ժամանակահատվածը

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ուսումնասիրության նյութերով հայտնի հանգամանքները՝ իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրվող ժամանակահատվածը*, որը ներառում է ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը, *ինչպես նաև ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը*, որը չի կարող լինել ավելի երկար, քան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացմանը նախորդող տասը տարին, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, ապա իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը*:

Չնայած այն հանգամանքին, որ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը ուսումնասիրվող ստանդարտ ժամանակահատված է համարում 10 տարին, ուսումնասիրություն իրականացնող մարմինն բացարձակ հայեցողություն է վերապահում այդ ժամանակահատվածը տարածել մինչև 1991թ. սեպտեմբերի 21-ը՝ չսահմանելով որևէ օբյեկտիվ չափանիշ: Օրենքի կիրարկումը նման երկար հետադարձ ժամանակահատվածով զգալիորեն բարդացնում է անձի կողմից իր գույքի օրինականությունը ապացուցելու գործընթացը՝ ընդհուպ մինչև նրան զրկելով այդ հնարավորությունից:

<sup>37</sup> Todorov and Others v. Bulgaria, 13 July 2021, կետ 202:

Այս հարցին առանձնակի ուշադրություն է դարձվել ՄԻԵԴ-ի կողմից Տոդորովն ընդդեմ Բուլղարիայի գործով համանման իրավիճակի գնահատման ժամանակ: ՄԻԵԴ-ն արձանագրել է. «Խելամիտ է ենթադրել, որ 2005թ. Օրենքի կիրառման լայն շրջանակը, և հատկապես օրենքի հետադարձ կիրառմամբ ընդգրկված երկար ժամանակահատվածը, դժվարացնում էին իրենց ունեցվածքի օրինական եկամուտի կամ գույքի օրինական ծագման ապացուցումը դիմողների կողմից»:<sup>38</sup> ՄԻԵԴ-ը նման երկար ժամանակահատվածի համատեքստում ուշադրություն է հրավիրել նաև տնտեսական մեծ փոփոխությունների, սրընթաց ինֆլյացիայի և ստվերային տնտեսության հանգամանքների վրա, նշելով, որ դիմումատուները «... ոչ միայն պարտավոր էին, որոշ դեպքերում, հաշվետու լինել իրենց շատ տարիներ առաջ եղած ֆինանսական վիճակի մասին, ...հատկանշական է նաև, որ տվյալ ժամանակահատվածի որոշ փուլերում Բուլղարիայում բնութագրվել են տնտեսական լուրջ փոփոխություններով և սրընթաց ինֆլյացիայով: Հարկ է նաև նշել, որ Բուլղարիայում ստվերային տնտեսության տոկոսը բարձր է եղել առնվազն 1993 թվականից ի վեր»<sup>39</sup>:

ՄԻԵԴ-ի կողմից բարձրացված վերոհիշյալ խնդիրները առավել քան արդիական են նաև Հայաստանի Հանրապետության դեպքում:

### 3. ՕՐԵՆՔԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԻ ԽՆԴԻՐԸ

Ինչպես արդեն նշվեց, Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն գույքի ծագման ուսումնասիրության ժամանակահատվածը ներառում է նաև ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը՝ ընդհուպ մինչև որոշման կայացմանը նախորդող տասը տարին, իսկ բացառիկ դեպքերում՝ կարող է ներառել 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը:

Այսպիսով, Օրենքը անձի վրա դնում է իր գույքի ձեռքբերումը օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով հիմնավորելու այնպիսի պարտականություն, որը չի եղել նախկինում՝ մինչև Օրենքի ընդունումը: Քանի որ օրենքի ընդունումից առաջ ավարտված փաստակազմի վրա (գույքի ձեռքբերումը) տարածվում են նոր իրավական հետևանքներ, ապա առկա է օրենքի իրական (իսկական) հետադարձ ուժի կիրառում: Որպեսզի անձը Օրենքով նախատեսված պահանջների հաշվառմամբ կարողանա հիմնավորել իր եկամուտները, նա պետք է պահպանած լինի դրանց վերաբերյալ փաստաթղթեր կամ այլ հիմնավորող

<sup>38</sup> Todorov and Others v. Bulgaria, 13 July 2021, կետ 202:

<sup>39</sup> Todorov and Others v. Bulgaria, 13 July 2021, կետ 203:

ստեղծությունները, ինչը, սակայն, նախկինում որևէ նորմատիվ իրավական ակտով պահանջված չի եղել:

Հետադարձ ուժի առումով հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Սահմանադրության 73-րդ հոդվածը ուղղակիորեն, առանց վերապահումների արգելում է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը և հետադարձ ուժի արգելքը տարածում է անձի իրավական վիճակը վատթարացնող *բոլոր իրավական ակտերի վրա*: Այս առումով, սահմանադրական կարգավորումներն ունեն ավելի լայն բովանդակություն, քան նույն ՄԻԵԿ 7-րդ հոդվածը, որը տարածվում է միայն քրեաիրավական հարաբերությունների վրա և արգելում է հետադարձ ուժը միայն արարքի քրեականացմանը վերաբերող հարցերում:

#### 4. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԻ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

Վարույթի իրականացման և դատական պաշտպանության՝ Օրենքով նախատեսված կարգավորումները անձի վրա դնում են ապացուցման անհամաչափ մեծ բեռ, որի արդյունքում խախտվում է անձի Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս հանդիսացող գործի արդարացի քննության իրավունքը:

Գործի քննության արդարացիությունն ընդգրկում է նաև մրցակցային դատավարության և կողմերի իրավահավասարության պահանջներ: Դատավարության մրցակցային բնույթը նշանակում է, որ գործին առնչվող նյութերն ու ապացույցները պետք է հասանելի լինեն երկու կողմերին, և նրանք պետք է ունենան հակառակ կողմի ներկայացրած ապացույցներին և փաստարկներին ծանոթանալու և դրանք մեկնաբանելու հնարավորություն: Կողմերի իրավահավասարությունը ենթադրում է կողմերի՝ գործը ներկայացնելու հավասար հնարավորությունների ապահովում<sup>40</sup>:

Արդար դատաքննության իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:» ՄԻԵԴ-ը բազմիցս շեշտադրել է արդար դատաքննության իրավունքի առանցքային դիրքը

<sup>40</sup> <https://www.concourt.am/armenian/decisions/common/2018/pdf/sdv-1426.pdf>:

ժողովրդավարական հասարակությունում<sup>41</sup> համարելով այն նրա հիմնասյուներից մեկը<sup>42</sup>:

Արդար դատաքննության իրավունքի իրացման տեսանկյունից Օրենքում խնդրահարույց են, մասնավորապես, հետևյալ հարցերը, որոնց անդրադարձ է կատարվում ստորև՝

- 1) ապացուցման բեռի անհամաչափ բաշխում,
- 2) անհավասար մրցակցային դատավարական կանոններ,
- 3) գործի նյութերին ծանոթանալու սահմանափակ ժամկետ:

#### 4.1. Ապացուցման բեռի բաշխման համաչափության հիմնախնդիրները

Օրենքի մի շարք կարգավորումներ խախտում են արդար դատաքննության սահմանադրական նվազագույն պահանջները՝ անձին զրկելով իր պաշտպանությունն արդյունավետորեն կազմակերպելու հավասար հնարավորություններից և գործիքակազմից: Մասնավորապես, Օրենքի 22-րդ հոդվածի համաձայն.

1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը (1-ին մաս):
2. Դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով (2-րդ մաս):
3. Պատասխանողը կարող է հերքել գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ (3-րդ մաս):
4. Այն դեպքերում, երբ փաստերը, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, անձը չի կրում իր կողմից ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու

<sup>41</sup> Stanev v. Bulgaria [GC], 2012, § 231:

<sup>42</sup> Pretto and Others v. Italy, 1983, § 21:

բացասական հետևանքները, եթե ապացուցում է, որ տվյալ ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով (4-րդ մաս):

Վերոշարադրյալը պետք է դիտարկել նաև այն համատեքստում, որ ինչպես արդեն նշվել է, Օրենքն ուսումնասիրություն սկսելու համար որպես ազդակ թիրախավորում է հանցատեսակների չափազանց լայն շրջանակ և որոշ դեպքերում անգամ այնպիսի հանցատեսակներ, որոնց կատարման արդյունքում հնարավոր չէ ողջամտորեն ենթադրել մեծ չափերի շահույթի ստացման մասին<sup>43</sup>:

Ուշադրության է արժանի նաև այն, որ Օրենքով չնայած ուսումնասիրվող ժամանակահատվածը, որպես կանոն, սահմանվում է տասը տարի, սակայն, գրեթե յուրաքանչյուր դեպքում իրավասու մարմինը ունի ոչնչով չկաշկանդված հայեցողություն ուսումնասիրվող ժամանակահատվածն ընդհուպ մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ը տարածելու համար<sup>44</sup>: Արդյունքում հնարավոր են դեպքեր, որ անձը ստիպված լինի ապացուցել անգամ Օրենքի ընդունումից 30 տարի առաջ ձեռք բերված գույքի օրինականությունը:

Օրենքը որևէ կերպ հաշվի չի առել նաև այն տնտեսական տրանսֆորմացիաները, որոնք տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետությունում 1991 թվականից ի վեր<sup>45</sup> :

Միաժամանակ, Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի ուժով գործում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, ինչը նշանակում է, որ իրավասու մարմինը կարող է հենվել միայն գույքի և օրինական եկամուտի անհամապատասխանության վրա, անգամ չներկայացնելով որևէ ապացույց, որ անձը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված է եղել որևէ հանցագործության կատարման մեջ:

Վերոհիշյալի հետ մեկտեղ, Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը ուղղակիորեն վատթարացնում է անձի իրավական վիճակը՝ նրա վրա հետին թվով դնելով ցանկացած ապացույց պահպանելու պարտականություն, իսկ դրանք չպահպանելու դեպքում բացասական հետևանքները թողնելով նրա վրա: Նշված դրույթի համաձայն նույնիսկ այն դեպքում, եթե մինչև կոնկրետ փաստի կամ իրադարձության պահը օրենքով սահմանված չի եղել, որ փաստը պետք է հաստատվի «միայն որոշակի ապացույցներով», ապա անձը, միևնույն է, ինքն է կրում ապացուցման բեռը: Վենետիկի հանձնաժողովը Բուլղարիայի օրենքի հետ կապված այս առումով խնդրահարույց է համարել անձի վրա դրված պահանջը

<sup>43</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս մաս 2.2.2:

<sup>44</sup> Մաս 2.3.2:

<sup>45</sup> Նույն տեղում:

ապացուցելու փաստաթղթերի կորուստը կամ ոչնչացումը ոչ իր մեղքով: Վենետիկի հանձնաժողովը բավարար է համարել միայն, որ պատասխանողը ներկայացնի ողջամիտ հիմքեր, թե ինչու այդ փաստաթղթերն առկա չեն<sup>46</sup>:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում ենք, որ Օրենքը անձի վրա դնում է ապացուցման անհամաչափ մեծ բեռ՝ խախտելով անձի Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս հանդիսացող գործի արդարացի քննության իրավունքը:

#### 4.2. Մրցակցային դատավարության հիմնախնդիրները

Օրենքի համաձայն վարույթը դատարանում իրականացվում է քաղաքացիական դատավարության կարգով: Չնայած քաղաքացիական դատավարությանը բնորոշ մրցակցության սկզբունքով վարույթին, Օրենքով նախատեսված բռնազանձման կառուցակարգում և՛ մինչև դատավարությունը, և՛ բուն դատավարության ընթացքում որպես կողմ հանդես է գալիս իշխանական լիազորություններով օժտված իրավասու մարմինը (դատախազությունը), որին Օրենքը վերապահում է նաև մի շարք առավելություններ<sup>47</sup>: Վարույթի մյուս կողմում հանդես է գալիս անձը, որի իրավունքների պաշտպանության համար նրա վրա դրվում է ապացուցման անհամաչափ մեծ բեռ: Արդյունքում, Օրենքը պարունակում է բազմաթիվ դրույթներ, որոնք ակնհայտ հակամրցակցային վիճակի մեջ են դնում «քաղաքացիական» համարվող դատավարության կողմերին: Մինչդեռ մրցակցությունը և գործիքների հավասարությունը քաղաքացիական դատավարության առանցքային սկզբունքն է: Այսպես, Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ուսումնասիրություն սկսելու հանգամանքը, դրա հիմքերը, դրա ընթացքի վերաբերյալ և դրա արդյունքում ստացված տվյալները գաղտնի են, ենթակա են տրամադրման շահագրգիռ անձանց միայն սույն օրենքով նախատեսված կարգով, իսկ այլ անձանց՝ բացառապես իրավասու մարմնի համաձայնությամբ՝ ելնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման վարույթի նպատակներից: Իրավասու մարմինը նախազգուշացնում է շահագրգիռ անձանց, նրանց ներկայացուցիչներին, փորձագետներին, մասնագետներին, թարգմանիչներին և այլ ներգրավված անձանց ուսումնասիրության արդյունքներով ստացված տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության

<sup>46</sup> Venice Commission, Opinion on the Sixth Revised Draft Act on Forfeiture of Assets Acquired Through Criminal Activity or Administrative Violations of Bulgaria, Adopted by the Venice Commission at its 87th Plenary Session, CDL-AD(2011)023, կետ 58, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2011\)023-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2011)023-e):

<sup>47</sup> Դատախազության կարգավիճակի մասին տե՛ս նաև ստորև՝ մաս 8:

*և համապատասխան պարտականությունը խախտելու համար օրենքով նախատեսված պատասխանատվության մասին»:*

Քանի որ Օրենքով նախատեսված գործընթացը իր բնույթով քաղաքացիական է և իրականացվում է քաղաքացիական դատավարության շրջանակներում, վարույթը պետք է երաշխավորի կողմերի հավասարությունը ու մրցակցությունը: Հետևաբար, անձը պետք է ունենա ուսումնասիրությունից և դրա արդյունքում ներկայացվող հայցից պաշտպանվելու համար այնպիսի գործիքներ, որոնք իրեն հնարավորություն կտան հակադարձելու պետական մարմնին:

Նշված համատեքստում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման արգելքը անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի անհամաչափ սահմանափակում է: Ավելին, ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները առանց իրավասու մարմնի թույլտվության հրապարակելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն, մասնավորապես՝ պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով (<< քրեական օրենսգիրք, հոդված 342.2.), որը ևս անհամաչափ պատասխանատվության միջոց է նախատեսում:

#### **4.3. Գործի նյութերին ծանոթանալու համար սեղմ ժամկետները**

Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն *շահագրգիռ անձինք ծանուցումն ստանալու պահից՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունեն ծանոթանալու ուսումնասիրության արդյունքներով հավաքված նյութերին և ներկայացնելու իրենց դիրքորոշումը:*

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն *ուսումնասիրությունը կարող է **փակել առավելագույնը երկու փարի**, որն իրավասու մարմնի որոշմամբ կարող է երկարացվել մինչև մեկ փարի ժամկետով, եթե դա պայմանավորված է միջազգային համագործակցության կարգով ուղարկված խնդրանքի կատարման կամ միջազգային համագործակցության կարգով ստացված տեղեկությունների հիման վրա գործողությունների կատարման անհրաժեշտությամբ:*

Օրենքի վերը նշված կարգավորումների արդյունքում ստացվում է մի իրավիճակ, որ անձին տրվում է ուսումնասիրությունների արդյունքում հավաքված նյութերին ծանոթանալու համար ընդամենը 1 ամիս ժամանակ այն դեպքում, երբ իրավասու մարմինը այդ նյութերը կարող է հավաքել երկու, իսկ որոշ դեպքերում՝ նաև երեք տարվա ընթացքում:

Հաշվի առնելով, որ Օրենքի հիման վրա իրականացվող գործընթացը իր էությանը և բնույթով «քվազիքրեական» է, հետևաբար այս դեպքում անձը պետք է ունենա Սահմանադրության 67-րդ հոդվածի 3-րդ մասին համարժեք իրեն ներկայացված մեղադրանքներից լիարժեք պաշտպանության իրավունք: Օրենքով նախատեսված գործընթացներով անցնող անձին պետք է տրվի ողջամիտ ժամկետ, որպեսզի վերջինս ունենա բավարար ժամանակ և հնարավորություն դատախազության «հայցից» (ըստ էության մեղադրանքից) պաշտպանվելու համար: Օրենքով նախատեսված կարգավորումը արդար դատաքննության իրավունքի խախտումից զատ անհամաչափորեն սահմանափակում է Սահմանադրության 64-րդ հոդվածով սահմանված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

Բացի վերոհիշյալից, Օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ դիմումը բավարարելու մասին որոշումը կարող է բողոքարկվել անձի կողմից, որի տվյալների ստացման առնչությամբ կայացվել է դատարանի որոշումը: Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն սույն օրենքով նախատեսված կարգով ստանալու պահից՝ յոթնօրյա ժամկետում, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումն ստանալու պահից՝ տասնհինգօրյա ժամկետում: Դատական ակտի բողոքարկումը չի կասեցնում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքը:

Անձի՝ իր անձնական տվյալների առնչությամբ կայացված դատական ակտերի բողոքարկման Օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված յոթնօրյա ժամկետը պետք է դիտարկել վերոհիշյալ 1-ամսյա ժամկետի համատեքստում, որը տրվում է անձին այդ ամբողջ նյութերին ծանոթանալու համար: Արդյունքում ստացվում է իրավիճակ, որ անձը ունենում է ընդամենը մեկ ամիս ժամանակ ծանոթանալու իրավասու մարմնի կողմից երկու (որոշ դեպքերում նաև երեք) տարիների ընթացքում հավաքագրված ամբողջ տեղեկատվությանը և այդ ամբողջ ծավալի մեջ ընդամենը յոթնօրյա ժամկետ (որը ներառում է մեկամսյա ժամկետի մեջ)՝ ինչպես վերաքննության, այնպես էլ վճռաբեկության կարգով այդ որոշումները բողոքարկելու համար:

## 5. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ

Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք»: Սահմանադրությունը հանրային իշխանությունից պահանջում է օրենսդրական մակարդակում ամրագրել այնպիսի ընթացակարգեր և կառուցակարգեր, որոնք արդյունավետորեն



կերաշխավորեն անձի կողմից իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, ինչպես նաև գործնականում կապահովեն, որ անձն իր գիտակցված և կամավոր որոշմամբ ընտրի իր վարքագիծը՝ օգտվելով իրավաբանական օգնությունից, թե՛ ոչ<sup>48</sup>:

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ունի մեծ կարևորություն և նշանակություն հիմնական իրավունքների արդյունավետ պաշտպանության հարցում, հատկապես արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի իրացման և պաշտպանության հարցում: ՄԻԵԴ-ը նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի՝ պաշտպանության կողմի իրավունքների վերաբերյալ պահանջները դիտարկվում են որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվող արդար դատաքննության իրավունքի առանձնակի ասպեկտներ (Sakhnovskiy v. Russia, judgment of 2 November 2010, § 94, Gafgen v. Germany, judgment of 1 June 2010, § 169):

Վերոհիշյալի լույսի ներքո ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ուսումնասիրության արդյունքներով հավաքված նյութերին ծանոթանալու և ստացված տվյալների առնչությամբ իրենց դիրքորոշումը ներկայացնելու փուլում (Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված ծանուցման արդյունքում) Օրենքը չի նախատեսում որևէ կարգավորում անձի շահերը իրավաբանի միջոցով պաշտպանելու հնարավորության մասին:

Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով Բուլղարիայի համանման օրենքի նախագծին<sup>49</sup>, նշել է, որ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները և փաստաթղթերը կարող են հանգեցնել անձի գույքի բռնագանձման: **Առանց որոշակի պաշտպանության միջոցների նախատեսման այս կարգավորումները կարող են ազդել ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված պաշտպանության իրավունքին, ինչպես նաև Բուլղարիայի Սահմանադրության 56-րդ հոդվածով երաշխավորված պետական մարմնի առջև իրավախորհրդատուի ուղեկցությամբ հանդես գալու իրավունքին:**

<sup>48</sup> ՍԴՈ-1403, կետ 5 (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119779>):

<sup>49</sup> Բուլղարիայի օրենքը նախատեսում էր «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված նմանատիպ բռնագանձման կառուցակարգի: CDL-AD(2010)010, կետ 54:

## 6. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ

Օրենքի մի շարք դրույթներ խախտում են Սահմանադրության 31-րդ հոդվածով նախատեսված մասնավոր կյանքի անձեռնմխելիության և 34-րդ հոդվածով սահմանված անձնական տվյալների պաշտպանության հիմնական իրավունքները:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ *ուսումնասիրության իրականացման ընթացքում իրավասու մարմինը կարող է հավաքել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ՝ սույն հոդվածով սահմանված կարգով*: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *իրավասու մարմինը կարող է դիմել առաջին աստիճանի դատարան՝ ներկայացնելով նոտարական, բանկային, ապահովագրական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված՝ ծառայողական տեղեկություններ (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկությունների), վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն պահանջելու դիմում*:

Վերը նշված իրավանորմերը խնդրահարույց են, մասնավորապես, երկու տեսանկյունից.

1. Մատչելի են դարձվում անձանց լայն շրջանակի մասնավոր կյանքին և անձնական տվյալներին առնչվող տեղեկություններ: Պատասխան չի տրվում այն հարցին, թե արդյոք իրավասու մարմնի ներկայացրած դիմումն առնչվում է միայն այն անձի՞ն, ում գույքի նկատմամբ հարուցվել է վարույթը, թե՞ նրա հետ փոխկապակցված անձանց կամ ցանկացած անձի, ում անձնական տվյալները վարույթ իրականացնող մարմինը անհրաժեշտ կհամարի ստանալ:
2. Հայցվող տվյալները վարույթի շրջանակներում հասանելի են դարձվում անորոշ շրջանակի անձանց, ինչի հետևանքով խնդրահարույց են ձեռք բերված անձնական տվյալների գաղտնիության պահպանման մեխանիզմները:

Անձի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար իրավունքներից մեկն է, որը պաշտպանված է Սահմանադրության 31-րդ հոդվածով: Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1546 որոշման մեջ արձանագրել է, որ 31-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը ներառում է նաև բանկային

գաղտնիքը, որը պաշտպանվում է պետության կողմից, մասնավորապես, ի դեմս Կենտրոնական բանկի՝ իր հաճախորդ բանկերի կողմից տրամադրված տեղեկությունների մասով, և հենց այդ բանկերի կողմից<sup>50</sup>:

Միևնույն ժամանակ, որևէ գաղտնիք, որը վերաբերում է մասնավոր անձին, Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի ուժով արդեն իսկ պաշտպանված է, ուստի, այն պետք է լինի նաև օրենսդրորեն պաշտպանված՝ անկախ այն հանգամանքից, թե այդ գաղտնիքը վերաբերո՞ւմ է անձի նեղ անձնային հատկանիշներին, ներքին ինքնորոշման այլ բաղադրիչներին, թե՞ նրա՝ գաղտնիությամբ ապահովված հաղորդակցությանը պետության, հանրության կամ այլ մասնավոր անձանց հետ: Դա վերաբերում է ոչ միայն բանկային գաղտնիքին, այլև այլ գաղտնի տեղեկություններին<sup>51</sup>:

Ընդլայնելով 31-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության տիրույթը՝ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 34-րդ հոդվածում սահմանադրական մակարդակով լիարժեքորեն ամրագրվել է նաև անձնական տվյալների պաշտպանության իրավունքը՝ վերաբերելի անձնական տվյալների հավաքման, մշակման և դրանց ծանոթանալու հարցերով

Վերը ներկայացված դիրքորոշումների համատեքստում պետք է գնահատման առարկա դարձվի, թե որքանով է թույլատրելի, մասնավորապես, Սահմանադրության 31-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքի սահմանափակումը և որքանով է այն համապատասխանում Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության և 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության պահանջներին:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Վերլուծելով նշված հոդվածով երաշխավորված իրավունքի սահմանափակման սահմանադրորեն արտոնված հիմքերը՝ կարելի է եզրահանգել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի առնչությամբ սկսված ուսումնասիրության

<sup>50</sup>ՍԴՈ-1546 որոշում, կետ 4.1:

<sup>51</sup> Նույն տեղում:

տեսանկյունից նպատակը կարող է, ըստ էության, վերաբերելի լինել հիմքերից միայն մեկին՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակին:

Այդպիսի կանխավարկածից է ելնում նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը, որի նախագծի հիմնավորման 77-րդ կետում նշված է, որ *Օրենքի նախագծով ուսումնասիրությունը սկսվում է քրեադատավարական որոշված ազդակների առկայության դեպքում, որից հետո ընթանում է քրեական ընթացակարգերից անկախ*<sup>52</sup>: Հետևաբար, ուսումնասիրություն իրականացնող մարմինը՝ քաղաքացիական դատարանին միջնորդելով ստանալ անձի վերաբերյալ բանկային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկություններ, պետք է որպես դրդապատճառ ունենա միմիայն հանցագործության կանխումը կամ բացահայտումը և պետք է հիմնավորի, որ նշված տեղեկությունների ստացումը կարող է լրջորեն նպաստել վերոգրյալ նպատակին հասնելուն:

Հաշվի առնելով 105-րդ կետում հիշատակված քրեադատավարական ազդակների առկայությունն ու օրենքի հիմնավորման տրամաբանությունը՝ ակնհայտ է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի բոլոր 5 կետերն էլ այս կամ այն իմաստով պետք է կիրառելի լինեն կա՛մ քրեական գործի հարուցումից հետո, կա՛մ ապօրինի գույքի վերաբերյալ ուսումնասիրության ընթացքում նախատեսեն քրեական վարույթի հարուցում: Վերոգրյալ պատճառահետևանքային կապը, սակայն, Օրենսդրի կողմից պատշաճ ուշադրության չի արժանացել, ինչը հիմնավորվել է սույն դիմումի 1-ին մասում: Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով հարուցված վարույթների պարագայում ամբողջությամբ բացակայում է սահմանադրորեն նախատեսված լեգիտիմ նպատակը: Քանի որ օրենքի նույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքով հարուցված վարույթների պարագայում էլ որոշ դեպքերում ուղղակիորեն խզված է պատճառահետևանքային կապը կատարված քրեորեն պատժելի արարքի և ապօրինի գույքի միջև<sup>53</sup>, ուստի անձնական տվյալներ պարունակող տեղեկությունները իրավասու մարմինն տրամադրելը հանցագործությունների կանխման կամ բացահայտման պատճառաբանությամբ հիմնավորելը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց է:

Այն դեպքերում, երբ վարույթի հարուցումը հետապնդում է Սահմանադրությամբ սահմանված լեգիտիմ նպատակ, ապա այդ նպատակին հասնելու համար Օրենքով նախատեսված միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: Ստորև անդրադարձ է կատարվում անձնական տվյալները շահառուների չափազանց լայն շրջանակից ստանալու և այդպիսի

<sup>52</sup> <https://www.e-draft.am/projects/1931/about>:

<sup>53</sup> Մաս 2.2.1.1 և 2.2.1.2:

տվյալների փոխանցումը անորոշ թվով անձանց թույլատրելի դարձնելու հանգամանքների համաչափությանը:

Հաշվի առնելով, որ օրենսդիրն Օրենքի շրջանակներում **չի հստակեցրել** բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների ստացման սուբյեկտների շրջանակը, ապա ակնհայտ է, որ համաչափության թեստի կոմույատիվ բաղադրիչներն այս դեպքում նույնպես պահպանված համարելը խնդրահարույց է:

Մասնավորապես, հանցագործությունների բացահայտման կամ կանխման լեգիտիմ նպատակի առկայության պարագայում ակնհայտ է, որ հանցագործության մեջ կասկածվող անձի Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների սահմանափակման ծավալները չեն կարող լրիվ նույնական լինել նրա հետ փոխկապակցված և առավել ևս այլ՝ երրորդ անձանց իրավունքների սահմանափակման ծավալների հետ: Հստակություն չմտցնելով պահանջվող տեղեկություններին ենթադրաբար տիրապետող սուբյեկտների ցանկի հարցում՝ Օրենսդիրն ի սկզբանե հավասարության նշան է դնում ցանկացած անձի պարագայում, ում օրինական շահերն ու իրավունքները կարող են շոշափվել կարգավորող նորմով:

Անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկային՝ պետք է արձանագրել, որ ՄԻԵԴ-ը մի շարք գործերով Կոնվենցիայի 8-րդ հոդվածի (Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) խախտում է արձանագրել այն իրավիճակներում, երբ ներպետական օրենքով հստակեցված չի եղել անձանց շրջանակը, ում անձնական տվյալները պատկան մարմինների կողմից կարող են հավաքագրվել<sup>54</sup>:

Վերոգրյալի համատեքստում, Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1546 որոշման շրջանակներում արտահայտված որոշ իրավական դիրքորոշումների հետ զուգահեռները, ըստ էության, անխուսափելի են: Այսպես, վերը հիշատակված որոշման *շրջանակներում՝ անդրադառնալով Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցին, Սահմանադրական դատարանն արձանագրել է՝ այլ անձանց հետ որևէ առնչակցությամբ հանցանքի կատարումը կամ գոնե այդպիսի հանցանքի կատարման կապակցությամբ*

<sup>54</sup> Տե՛ս, օրինակ՝ Rotaru v. Romania, թիվ 28341/95, կետ 57:

բավարար կասկածների առկայությունն արդեն իսկ օբյեկտիվացված, այսինքն՝ առարկայական չափանիշ է, որը թույլ է տալիս որոշակիացնել այն անձանց սուբյեկտային շրջանակը, որոնց մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքը կարող է սահմանափակվել: Սակայն... բուն վիճարկվող իրավակարգավորումներում **առկա չէ որևէ առարկայական չափանիշ, որը հնարավորություն կտար որոշակիացնել հիմնական իրավունքի սահմանափակման ենթակա մասնավոր անձանց սուբյեկտային շրջանակը:** Նման առարկայական չափանիշների ամրագրումը հենց օրենքում հնարավորություն կտար Սահմանադրական դատարանին արդեն բովանդակային առումով անդրադառնալ դրանց սահմանադրականությանը... Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ հանցագործությունների կանխման կամ բացահայտման ենթադրյալ արդյունավետությունը՝ ի հաշիվ կոնկրետ հանցագործության հետ աղերս չունեցող անորոշ թվով անձանց (սուբյեկտային կազմի փաստացի բացակայությամբ) հիմնական իրավունքների սահմանափակման, ապահովելը կամ բարձրացնելը պիտանի չէ հանցագործությունների կանխման կամ բացահայտման սահմանադրական նպատակներին հասնելու համար<sup>55</sup>:

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ դատողությունները կիրառելի են նաև Օրենքի դրույթների վերաբերյալ՝ այնքանով, որ այն նույնպես չի հստակեցնում սուբյեկտների շրջանակը, որոնց ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքները վարույթի շրջանակներում կարող են սահմանափակվել: Արդյունքում Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ անորոշ նորմը չի կարող հանդիսանալ անձի Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքի սահմանափակման համար պիտանի միջոց: Այսպիսով՝ Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված որոշակիության սկզբունքին, ինչն էլ իր հերթին սահմանափակման համար ընտրված միջոցի տեսանկյունից կհակասի Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին<sup>56</sup>:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ *Ուսումնասիրություն սկսելու հանգամանքը, դրա հիմքերը, դրա ընթացքի վերաբերյալ և դրա արդյունքում ստացված տվյալները գաղտնի են, ենթակա են տրամադրման շահագրգիռ անձանց միայն սույն օրենքով նախատեսված կարգով, իսկ այլ անձանց՝ բացառապես իրավասու մարմնի համաձայնությամբ՝ **ելնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նպատակներից:*** Փաստորեն,

<sup>55</sup> ՍԴՈ-1546 որոշում, կետ 4.3:  
<sup>56</sup> ՍԴՈ-1546 որոշում, կետ 4.4.:

Օրենքի տեքստում բացակայում է վարույթի նպատակների սահմանումը<sup>57</sup>, հետևաբար վարույթ իրականացնող մարմնի համար հայեցողության չափազանց լայն դաշտ է բացվում, քանի որ հենց այդ մարմինն է որոշում՝ արդյո՞ք տեղեկությունները փոխանցելը այս կամ այն անձին բխում է վարույթի նպատակներից, թե՞ ոչ: Միաժամանակ ակնառու է, որ Օրենքը չի հստակեցնում, թե ով և ինչ կարգով կարող է հասանելիություն ունենալ և օգտագործել ստացված անձնական տվյալները և ինչպես են վերջիններս պաշտպանվում երրորդ անձանց հասանելիությունից: Մասնավորապես, Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված է, որ *Իրավասու մարմինը նախազգուշացնում է շահագրգիռ անձանց, նրանց ներկայացուցիչներին, փորձագետներին, մասնագետներին, թարգմանիչներին և այլ ներգրավված անձանց ուսումնասիրության արդյունքներով ստացված տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության և համապատասխան պարտականությունը խախտելու համար օրենքով նախատեսված պատասխանատվության մասին*: «Այլ ներգրավված անձինք» հասկացությունը, ըստ էության, կարելի է մեկնաբանել որպես ցանկացած անձ, ում վարույթն իրականացնող մարմինը նպատակահարմար կգտնի փոխանցել անձնական տվյալ պարունակող զգայուն տեղեկատվությունը, ինչն էլ իր հերթին չի բավարարում Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքին և վերջինիս համապատասխանության կոմույատիվ չափանիշներին:

## 7. ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ

Օրենքը պարունակում է մի շարք անորոշ կարգավորումներ, որոնց մի մասը խնդրահարույց են Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքին ներկայացվող որոշակիության սկզբունքի, իսկ մյուսները՝ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված իրավական պետության սկզբունքից բխող օրենքներին ներկայացվող որոշակիության պահանջի տեսանկյունից:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն *հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ*:

<sup>57</sup> Տե՛ս մաս 1:

Միաժամանակ, Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի **գերակայությունը**, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝** հստակ են, կանխատեսելի, մատչելի<sup>58</sup>:

Սահմանադրական դատարանը մատնանշել է, որ հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում<sup>59</sup>: Այս առումով, Օրենքում տեղ գտած մի շարք կարգավորումներ չեն համապատասխանում վերը նշված առանցքային սահմանադրական պահանջին:

### 7.1. «Գույք» հասկացության սահմանումը

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գույք է համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գույքը, այդ թվում՝ կրիպտոարժույթը:

«Հ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են նաև՝ գույքը (ներառյալ՝ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները) աշխատանքները և ծառայությունները, տեղեկատվությունը, մտավոր գործունեության արդյունքները, ներառյալ՝ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն) և ոչ նյութական բարիքները:

Պարզ չէ, թե ինչպես կարող է մտավոր սեփականությունը դիտարկվել Օրենքի իմաստով ապօրինի և բռնագանձվել: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը Օրենքի իմաստով գույք է դիտարկում նաև կրիպտոարժույթը, սակայն, Հայաստանի Հանրապետության որևէ նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ «կրիպտոարժույթ» հասկացությունը:

<sup>58</sup> ՍԴՈ – 1270, 3 մայիսի 2016 թ., կետ 7:

<sup>59</sup> ՍԴՈ-1546, 18 հունիսի 2020 թ., էջ 16, կետ 5,

<https://www.concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1546.pdf>:



## 7.2. «Օրինական եկամուտ» հասկացությունը

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը տալով «ապօրինի ծագում ունեցող գույք» հասկացության սահմանումը՝ այն բնութագրում է որպես գույք, որը չի հիմնավորվում օրինական եկամուտներով<sup>60</sup>: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով «օրինական եկամուտ» հասկացությունը սահմանված է որպես «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1277-րդ հոդվածի համաձայն որոշված կիրառելի իրավունքի նորմերի պահպանմամբ, Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով, կրիպտոարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտներն առանց հարկերի և պարտադիր վճարների, այդ թվում...»:

Օրենքի վերոհիշյալ կարգավորումից առհասարակ պարզ չէ «օրինական եկամուտ» հասկացության բովանդակությունը, քանի որ, եթե Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից դուրս բերենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1277-րդ հոդվածի վերաբերյալ կարգավորումը, որը կոլիզիոն նորմ է, կստացվի, որ «օրինական եկամուտը» եկամուտ է՝ արտահայտված դրամով, արտարժույթով, կրիպտոարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտներով: Քանի որ սահմանող հասկացությունը բացահայտ կրկնում է սահմանվող հասկացությունը, ապա այստեղ գործ ունենք տավտոլոգիայի (նույնաբանության) հետ:

Այնուհետև, Օրենքում օգտագործվող «այդ թվում» ձևակերպումից հետո ոչ սպառիչ կերպով թվարկվում են օրինական եկամտի առանձին տեսակները<sup>61</sup>:

<sup>60</sup> Մաս 1:

<sup>61</sup> ա. աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումներ, բ. գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը,

գ. ստացված փոխառությունները (վարկերը),  
 դ. տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցում,  
 ե. շահաբաժինները,  
 զ. խաղատներում կամ շահումներով խաղերում ստացված եկամուտները (շահումները),  
 է. մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները),  
 ը. նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները),  
 թ. ժառանգության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները),  
 ժ. ապահովագրական հատուցումները,  
 ժա. ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը,

Որպես այդպիսին ներկայացված են, օրինակ՝ գ) ստացված փոխառությունները և ը) նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները): Պարզ չէ, թե «փոխառության» կամ «նվիրատվության» իրավահարաբերությունների առկայության կամ բացակայության փաստը գնահատելու համար հիմք են ընդունվելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված համապատասխան դրույթները, այդ թվում նաև՝ գործարքի ձևին ներկայացվող պահանջները, թե՛ Օրենքի իմաստով «փոխառությանը» կամ «նվիրատվությանը» տրվում է այլ բովանդակություն:

### 7.3. Օրինական եկամտի և ծախսի հաշվարկի մեթոդաբանությունը

Սեփականության իրավունքին միջամտող օրենքի որոշակիության պահանջի տեսանկյունից խնդրահարույց է այն հանգամանքը, որ որևէ նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ հաշվարկի այն ձևը կամ մեթոդաբանությունը, որի միջոցով իրավասու մարմինը պարզում է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված գույքը ձեռք բերողի հայտնի եկամուտները և ծախսերը, այդ թվում՝ ապրուստի միջին ամսական ծախսերը, որի արդյունքը համադրելով գույքի արժեքի հետ, եզրահանգում է դրանց ծագման օրինականության վերաբերյալ: Դա մի կողմից՝ առաջ է բերում անորոշություն և անկանխատեսելիություն վարույթով անցնող անձանց համար, մյուս կողմից՝ կարող է հանգեցնել տարբերակված և հայեցողական մոտեցումների տարբեր վարույթների շրջանակում:

### 7.4. Ուսումնասիրության ժամանակահատվածը մինչև 1991թ. տարածելը

Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, ապա իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը:

---

ժբ. գույքն օտարելուց ստացված եկամուտը,  
 ժգ. վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում,  
 ժդ. միանվագ վճարները,  
 ժե. գույքային իրավունքներից ստացված եկամուտը,  
 ժզ. քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը,  
 ժէ. կենսաթոշակը,  
 ժը. գյուղատնտեսական արտադրանքի իրացումից կամ գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը:

Վերոհիշյալ դրույթի համաձայն ուսումնասիրության ժամանակահատվածը մինչև 1991թ. սեպտեմբերի 21-ը տարածելու համար ընդամենը բավարար են իրավասու մարմնի կասկածը և դրա վերաբերյալ որոշակի ապացույցների առկայությունը: Նշված երկու նախադրյալներն էլ, սակայն, իրենց բնույթով գնահատողական են և Օրենքը չի նախատեսում որևէ օբյեկտիվ չափանիշ կամ իրավասու մարմնի նշված որոշման դատական բողոքարկման միջոցով վերահսկողության հնարավորություն, որի արդյունքում իրավասու մարմինն է վերապահվում ոչնչով չկաշկանդված բացարձակ հայեցողություն՝ ուսումնասիրության ժամանակահատվածը երկարաձգելու համար:

### **7.5. Երրորդ անձի շահերի պաշտպանության մեխանիզմի բացակայությունը**

Օրենքի խնդրահարույց ասպեկտներից է նաև այն, որ չի նախատեսվում որևէ կարգավորում երրորդ անձանց շահերի և իրավունքների պաշտպանության համար այն դեպքում, երբ ապօրինի ծագում ունեցող գույքը ստացվել է ի վնաս նրանց: Արդյունքում, երրորդ անձինք, ըստ էության, զրկված են իրենց հաշվին գույքի բերման արդյունքում կրած հետևանքներից պաշտպանվելու և հատուցում ստանալու իրավական կառուցակարգերից:

### **7.6. Բռնագանձման վարույթ հարուցելու հիմքերի անհստակությունը**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով բռնագանձման վարույթ սկսելու համար, ի թիվս այլոց, որպես նախապայման է սահմանված ապօրինի ծագում ունեցող գույքի մասին կասկածը:

Ապօրինի ծագում ունեցող գույքի մասին կասկածի վերաբերյալ համանման կարգավորում է նախատեսված նաև Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, որի համաձայն իրավասու մարմինը կարող է ուսումնասիրություն սկսել այն դեպքում, երբ հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, և *առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու*, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք:

Վերը նշված երկու հիմքով ուսումնասիրություն սկսելու համար նախատեսված պայմաններից մեկը (ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածը) իրենից ամբողջությամբ ներկայացնում է գնահատողական դատողություն: Օրենքով, սակայն, նախատեսված չէ գեթ մեկ օբյեկտիվ հատկանիշ, որը հնարավորություն կտա սահմանափակելու ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածների հիմքերը գնահատող անձի բացարձակ հայեցողությունը:

### 7.7. Կիրառման ենթակա Օրենքի տեղը նորմերի աստիճանակարգության մեջ

Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, բռնագանձման վարույթին առնչվող նոր հիերարխիկ կանոններ նախատեսելով, սահմանում է, որ. «Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով, ապա գործում են սույն օրենքով սահմանված կանոնները»: Նման կարգավորումը ուղղակիորեն հանգեցնում է Սահմանադրության 5-րդ հոդվածի խախտման, քանի որ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմերի միջև իրեն ավելի բարձր իրավաբանական ուժ տալու արդյունքում կսահմանի հիերարխիայի նոր կանոններ: Բացի այդ առաջանում է անորոշություն, թե որ նորմերով պետք է առաջնորդվի իրավակիրառը, հատկապես ի նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ սահմանվում է, որ. «Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին»:

### 7.8. Բռնագանձման ենթակա գույքի անորոշությունը

Օրենքը պատասխան չի տալիս այն առանցքային հարցին, թե *կոնկրետ որ գույքն է ենթակա բռնագանձման*: Եթե, օրինակ, իսկապես կա անհամապատասխանություն օրինական եկամուտների և ծախսերի միջև, ապա ո՞ր գույքն է ենթակա բռնագանձման և ի՞նչ չափով: Ի՞նչ անել այն դեպքում, օրինակ, եթե գույքը ձեռք է բերվել մասամբ օրինական և մասամբ ոչ օրինական միջոցներով:

## 8. ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՕՐԵՆՔՈՎ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով անձի գույքի օրինականության ուսումնասիրության համար իրավասու մարմին է սահմանվել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանումը: Նշվածը խնդրահարույց է Սահմանադրության 176-րդ հոդվածով սպառիչ կերպով սահմանված դատախազության լիազորությունների տեսանկյունից, քանի որ դատախազությունն օժտվում է մի լիազորությամբ, որը չի մտնում նրա՝ Սահմանադրությամբ սպառիչ թվարկված լիազորությունների շրջանակի մեջ: Օրենքով սահմանված այդ լիազորությունը չի կարող արդարացվել նաև պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման տեսանկյունից: Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ

«դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան»:

Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասը պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումը դիտարկում է ոչ թե որպես դատախազության ստանդարտ գործառույթ, այլ որպես բացառիկ դեպքերում իրականացվող գործառույթ, իսկ այդ դեպքերի շրջանակն ու այդ գործառույթի իրականացման ընթացակարգը պետք է հստակեցվեն «Դատախազության մասին» օրենքով:

Ի կատարումն սահմանադրական պահանջների՝ «Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը մանրամասնում է բացառիկ դեպքերի այս շրջանակը: Դրանց վերլուծությունը ակնհայտ է դարձնում, որ խոսքը այս պարագայում այնպիսի իրավիճակների մասին է, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրենց վերապահված կամ պատվիրակված գործառույթների իրականացման արդյունքում պետությանը պատճառվել է վնաս և համապատասխան մարմինը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, հայց չի ներկայացնում կամ հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի: Մինչդեռ Օրենքով կարգավորվող իրավահարաբերությունների առումով հնարավոր չէ անդել, որ վնասը պատճառվել է պետության գույքային շահերին, այլ խոսքը հանրորեն վտանգավոր արարքի և հանրային շահերին հասցվող վնասի մասին է:

Բացի վերոհիշյալից, Սահմանադրության 176-րդ հոդվածի տեսանկյունից խնդրահարույց է նաև դատախազությանը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ իրականացման լիազորություն վերապահելը: Քանի որ Սահմանադրության 176-րդ հոդվածով դատախազության համար սահմանված լիազորությունների շրջանակը սպառիչ է, և դրանցից որևէ մեկը բովանդակային առումով չի կարող ներառել Օրենքով նախատեսված բռնագանձման վարույթի իրականացումը: Այս առումով պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթը, որին Հիմնավորման մեջ հղում է արվում<sup>62</sup> որպես դատախազությանը Օրենքով նախատեսված գործառույթ վերապահելու սահմանադրական հիմք, ունի խիստ նեղ բովանդակություն և կարող է վերաբերել միայն դատարան հայց հարուցելուն, այլ ոչ թե արտաքին ներգործություն ունեցող առանձին վարույթ իրականացնելուն:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարույթի իրականացումը դատախազությանը վերապահելը խնդրահարույց է նաև այդ մարմնի

<sup>62</sup> Հիմնավորում, կետ 11:

օբյեկտիվության և անաչառության տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ ապօրինի ծագում ունեցող գույքի ուսումնասիրությունն իրականացվում է դատախազության առանձին ստորաբաժանման կողմից, Սահմանադրության 176-րդ հոդվածի տրամաբանությամբ դատախազությունը գլխավոր դատախազի ղեկավարությամբ գործող մեկ միասնական մարմին է: Այս առումով խնդրահարույց է նաև գլխավոր դատախազի ազդեցությունը ուսումնասիրության ընթացքի նկատմամբ, ով Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով անգամ իրավասու է հրաժարվել ուսումնասիրության արդյունքներով դատարան ներկայացվող հայցադիմումից: Արդյունքում ստացվում է մի իրավիճակ, երբ և՛ քրեական վարույթը, և՛ ապօրինի ծագում ունեցող գույքի ուսումնասիրությունը իրականացվում է մեկ մարմնի կողմից, որը կարող է մեկ վարույթից ստացված տեղեկությունը առանց խոչընդոտի օգտագործել մեկ այլ վարույթում:

Վերը արդեն իսկ անդրադարձ է կատարվել այն հարցին, որ Օրենքը վարույթի ընթացքում դատախազությանը վերապահում է չափազանց լայն լիազորություններ, որոնք ոչ մի կերպ համատեղելի չեն քաղաքացիական դատավարության առանցքային սկզբունք համարվող մրցակցության և հավասարության հետ<sup>63</sup>: Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կողմից (այսուհետ նաև ԵԴԽԽ) 2008թ. ընդունված «Դատախազության դերը քրեաիրավական ոլորտից դուրս» թիվ 3 կարծիքի համաձայն<sup>64</sup> ԵԴԽԽ կոչ է անում այն պետություններին, որոնցում դատախազությունը ունի քրեական արդարադատության ոլորտից դուրս իրավասություններ, ապահովել այդ գործառույթների իրականացման հետևյալ սկզբունքները (կետ 34)՝

- քրեական իրավունքի ոլորտից դուրս գործելիս, դատախազները պետք է ունենան մյուս կողմերին հավասար իրավունքներ ու պարտականություններ, պետք է բացառել դատավարության ընթացքում դատախազության գերակա դիրքը (կողմերի հավասարության սկզբունք), (f),
- պետք է սահմանել անձանց և կազմակերպությունների, որոնք քաղաքացիական գործով ներգրավված են կամ շահագրգիռ կողմ են, դատախազների գործողությունները կամ անգործությունը բողոքարկելու իրավունքը (h):

<sup>63</sup> Մաս 4:

<sup>64</sup> Council of Europe, Opinion No 3(2008) of the Consultative Council of European Prosecutors on “The Role Of Prosecution Services Outside The Criminal Law Field”, adopted by the CCPE at its 3rd plenary meeting, CCPE(2008)3, <https://rm.coe.int/16807474ee>:

Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով Բուլղարիայի համանման օրենքի նախագծին, նույնպես ուշադրություն է հրավիրել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման գործընթացում դատախազությանը վերապահվող լիազորություններին: Հետաքրքրական է, որ Բուլղարիայի օրենքի նախագծով գույքի **ուսումնասիրությունն իրականացվում էր անկախ մարմնի կողմից**, իսկ դատախազությանը վերապահված էր ընդամենը դատարանում բռնագանձման վարույթին մասնակցություն և անձի հետ հաշտության կնքելու դեպքում վերջինիս համաձայնություն: Այդուհանդերձ, Վենետիկի հանձնաժողովը Բուլղարիային առաջարկել էր վերանայել դատախազության դերը նշված գործընթացում և երաշխավորել ԵԴԽԽ կողմից վերը հրապարակված կարծիքում արտահայտված սկզբունքները<sup>65</sup>, ինչը ամբողջությամբ ընդունվել է Բուլղարիայի իշխանությունների կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ ապօրինի ծագում ունեցող գույքի գործերով ուսումնասիրություն իրականացնելը և դատարան հայց ներկայացնելը դուրս է Սահմանադրության 176-րդ հոդվածով սպառիչ կերպով սահմանված՝ վերջինիս լիազորությունների շրջանակից: Օրենքը չի երաշխավորում նաև դատախազության՝ որպես իրավասու մարմնի անաչառությունը և օբյեկտիվությունը, ինչպես նաև վերջինիս օժտում է մի շարք առավելություններով, որոնք հակասության մեջ են ինչպես մրցակցության հիմնարար սկզբունքի, այնպես էլ միջազգային փորձի հետ:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Օրենքի ուսումնասիրությունը վեր է հանում դրանով հետապնդվող նպատակի և դրա առանձին դրույթների սահմանադրականության հետ կապված մի շարք մտահոգություններ, որոնք մանրակրկիտ վերլուծվել են վերը: Մասնավորապես.

1. Օրենքի սահմանադրականության և դրանով նախատեսվող՝ մարդու հիմնական իրավունքներին միջամտությունների իրավաչափության տեսանկյունից սկզբունքային նշանակություն է ունի Օրենքով հետապնդվող նպատակի լեգիտիմությունը, ինչը խնդրո առարկայի պարագայում կասկածի տակ է դրվում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգը հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործությունների արդյունքում ստացված հսկայական չափերի հասնող շահույթը բռնագանձելու համար օգտագործվող բացառիկ միջոց է: Այն հատկապես կիրառվում է այն դեպքերում, երբ անձը չի կարող քրեական դատավարության կարգով հետապնդվել

<sup>65</sup> [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)010-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)010-e), կետ 80-86:

մահվան, թաքնվելու, բացակայելու կամ համանման այլ պատճառներով: Մինչդեռ Օրենքով նախատեսված գույքի բռնագանձման վարույթը չի գործում որպես բացառիկ միջոց, այլ ընդհակառակը՝ ընթանում է քրեական վարույթից բացարձակապես անկախ՝ բռնագանձվող գույքի «ապօրինի ծագումը» որևէ կերպ չպայմանավորելով քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարման հետ:

2. Հիմնական իրավունքների տեսանկյունից Օրենքով նախատեսված կարգավորումների արդյունքում, առավել ինտենսիվ միջամտության է ենթարկվում Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը, ինչն առաջ է բերում սահմանադրականության հարցում լուրջ մտահոգություններ, մասնավորապես հետևյալ պատճառներով.
  - 2.1. Ինչպես սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը, այնպես էլ գույքի բռնագանձման կառուցակարգը գործի են դրվում անձի գույքի օրինականության ուսումնասիրությամբ, որը սկսվում է Օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Այս հիմքերի մի մասի դեպքում խզված է պատճառահետևանքային կապը հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործության և ենթադրաբար ապօրինի ծագում ունեցող գույքի միջև: Արդյունքում խախտվում է սեփականության իրավունքի սահմանափակմանը ներկայացվող առաջին պայմանը՝ լեգիտիմ նպատակը՝ սահմանափակումը դարձնելով անհամաչափ:
  - 2.2. Մեկ այլ խնդիր է գույքի օրինականության ուսումնասիրություն սկսելու համար Օրենքով այնպիսի հանցատեսակներ սահմանելը, որոնց դեպքում որևէ կերպ հնարավոր չէ ողջամտորեն ենթադրել էական շահույթի ստացում:
  - 2.3. Վերջնարդյունքում, բռնագանձվող գույքի և Օրենքով նախատեսված հանցագործության միջև որևէ պատճառահետևանքային կապ (ուղղակի կամ անուղղակի) չնախատեսելը, ավելին՝ որոշ դրույթների արդյունքում այդ կապը խզելը, հանգեցնում է ոչ միայն սեփականության իրավունքի անհամաչափ միջամտության, այլ նաև ամբողջ Օրենքի հակասահմանադրականության:
  - 2.4. Վերոհիշյալի առումով հատկանշական է նաև ՄԻԵԴ-ի դիրքորոշումը, որը էական փոփոխության է ենթարկվել 2015թ. կայացված Գոգիթիձեն և մյուսները ընդդեմ Վրաստանի<sup>66</sup> գործից հետո: 2021թ. Տոդորովն ընդդեմ

<sup>66</sup> «Լույս» հիմնադրամ, Դիտարկումներ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, էջ 25, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.luys.am/img/artpic/small/9ed860d3e8e66b06c834%D4%B4%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%C2%AB%D4%B1%D5%BA%D6%85%D6%80%D5%AB%D5%B6%D5%AB%D5%AE%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B4%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%81%D5%B8%D5%B2%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D6%84%D5%AB>



Բուլղարիայի գործով կայացված որոշմամբ ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ բռնագրավման ենթակա գույքի և հանցավոր գործունեության միջև պետք է ուղղակի կամ անուղղակի պատճառահետևանքային կապ հաստատվի կամ այդ կապը պետք է լինի ենթադրելի:

- 2.5. Սեփականության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման է հանգեցնում նաև Օրենքով նախատեսված գույքի օրինականության ուսումնասիրության չափազանց լայն ժամանակահատվածը: Մասնավորապես, ուսումնասիրվող ժամանակահատվածը մինչև 1991թ. սեպտեմբերի 21-ը տարածելու համար որևէ օբյեկտիվ չափանիշ չնախատեսելը զգալիորեն բարդացնում է անձի կողմից իր սեփականության օրինականությունը ապացուցելու գործընթացը՝ ընդհուպ մինչև նրան զրկելով այդ հնարավորությունից:
3. Օրենքը խնդրահարույց է հետադարձ ուժի տեսանկյունից, քանի որ անձի վրա դնում է իր գույքի ձեռքբերումը օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով հիմնավորելու այնպիսի պարտականություն, որը չի եղել մինչև Օրենքի ընդունումը:
4. Ապացուցման բեռի անհամաչափ բաշխման, անհավասար մրցակցային դատավարական կանոնների և գործի նյութերին ծանոթանալու սահմանափակ ժամկետի արդյունքում խախտվում է նաև անձի արդար դատաքննության իրավունքը:
5. Ուսումնասիրության արդյունքներով հավաքված նյութերին ծանոթանալու և ստացված տվյալների առնչությամբ իրենց դիրքորոշումը ներկայացնելու փուլում Օրենքը չի նախատեսում որևէ կարգավորում անձի շահերը իրավաբանի միջոցով պաշտպանելու հնարավորության մասին:
6. Օրենքով նախատեսված կարգավորումների արդյունքում մատչելի են դարձվում անձանց լայն շրջանակի մասնավոր կյանքին և անձնական տվյալներին առնչվող տեղեկություններ: Եվ քանի որ անձի գույքի օրինականության ստուգման համար ազդակ համարվող որոշ հիմքերի դեպքում ուղղակիորեն խզված է պատճառահետևանքային կապը քրեորեն պատժելի արարքի և ապօրինի գույքի միջև, ապա անձնական տվյալներ պարունակող տեղեկությունները հանցագործությունների կանխման կամ բացահայտման պատճառաբանությամբ իրավասու մարմնին տրամադրելը դառնում է սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց: Օրենքով

[%D5%A2%D5%BC%D5%B6%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B6%D5%B1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6%C2%BB%D5%80%D5%80%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D6%84%D5%AB%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%AB%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC.pdf:](#)

նախատեսված չեն նաև մասնավոր կյանքի և անձնական տվյալների վերաբերյալ ստացված տեղեկությունների պատշաճ պահպանման համար անհրաժեշտ մեխանիզմներ:

7. Օրենքում տեղ գտած մի շարք կարգավորումներ, մասնավորապես՝ «գույք», «օրինական եկամուտ» հասկացությունների անորոշությունը, օրինական եկամտի և ծախսի հաշվարկի մեթոդաբանության բացակայությունը, երրորդ անձանց շահերի և իրավունքների պաշտպանության համար որևէ կարգավորում չնախատեսելը, բռնագանձվող գույքի անհստակությունը հանգեցնում են մի դեպքում՝ իրավական պետությունից, իսկ մեկ այլ դեպքում՝ հիմնական իրավունքները սահմանափակելիս ներկայացվող որոշակիության սկզբունքի խախտման:
8. Դատախազությանը վերապահվել է ապօրինի ծագում ունեցող գույքի գործերով ուսումնասիրություն իրականացնելու և դատարան հայց ներկայացնելու լիազորություններ, որոնք դուրս են վերջինիս՝ Սահմանադրությամբ սպառնիչ կերպով սահմանված լիազորությունների շրջանակից:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**